Azg
Ազգ
27 ՓԵՏՐՈՒԱՐ 2008 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 37 (3931)

«Ժամանակն է, որ բոլորը սթափվեն»

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը Հանրային հեռուստատեսությանը տված հարցազրույցում՝ անդրադառնալով երկրի հեռընտրական իրավիճակին նշել է, որ «ոստիկանությունը պարտավոր էր միջոցներ ձեռնարկել մինչ այսօր եւ չէր ձեռնարկում, հանի որ ես հորդորում էի համբերատար լինել, փորձել չարել իրավիճակը՝ հույս ունենալով, որ վերջապես ողջամտությունը կհաղթի եւ մարդիկ կսթափվեն»: «Մենք շա հանդուրժողական ենք, միջազգային տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ղեկավարներ, ովքեր այցելում են Հայաստան, նշում են, որ գնահատում են մեր համբերատարությունը»,-ասել է Քոչարյանը ավելացնելով, որ յուրաքանչյուր եվրոպական երկրում վեց օր որեւէ իշխանություն չէր հանդուրժի ապօրինի երթեր եւ ցույցեր: «Կարծում եմ՝ ժամանակն է, որ բոլորը սթափվեն եւ հասկանան, որ զոհաբերությամբ իշխանության չեն գալիս: Իմ կոչը հրապարակում գտնվող մարդկանց հեռեւալն է՝ հարգելի ժողովուրդ, գործիք մի դարձեք անոթասփսանատու քաղաքական գործիչների ձեռքին, դա ձեր խաղը չէ, այդ խաղից դուռ չեմ շահելու, միայն կորցնելու եմ եւ կորցնելու է երկիրը»,- եզրափակել է նախագահը:

Մեծ Սարգսյանը համագործակցության առաջարկ արեց

Միաժամանակ խոստացավ պաշտել օրինապանցներին

ՄԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Երեկ Հանրապետության հրապարակում ասելը գցելու տեղ չկար: Հանրապետության բոլոր մարզերից ու Երեւանի բոլոր համայնքներից եկել էին նրանք, ովքեր իրենց խլեն էին տվել փետրվարի 19-ին ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին: Ներկաները մեկ բոմբ լռությամբ հարգեցին Սումգայիթի անմեղ զոհերի հիշատակը, որից հետո նոր միայն իր շնորհակալության ու վստահության խոսքը հղեց Հայաստանի երրորդ հանրապետության երրորդ նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանն ու վստահեցրեց, որ ամեն ինչ կանի, որպեսզի լուծի իրենց առջեւ ծառացած խնդիրները: «Այսօր մեզ մեկտեղել են եւ հաղթական բերկրանքը, եւ մտահոգությունները մեր երկրի ապագայի հանդեպ...», ասաց ընտրված նախագահ Սերժ Սարգսյանն ու ցավ հայտնեց, որ դեռ շա վերեր նոր են սրիանում, հանի որ ոմանք չեն կարողանում մինչեւ վերջ գիտակցել ու գնահատել մեր երկրի ձեռքբերման արժեքը, ժողովրդավարության արժեքը, ընտրությունների միջոցով իշխանություն ձեւավորելու արժեքը, մեծամասնության կարծիքի արժեքը:

Ս. Սարգսյանը շնորհակալություն հայտնեց այն ընտրողներին, ովքեր քվեարկել էին մյուս թեկնածուների օգտին ու ասաց. «Մենք հարգում ենք մեր քաղաքացիների տեսակետները ու չենք բաժանում հասարակությունը՝ մերոնց ու նրանց, կամ, ինչպես որոշ վայ ժողովրդավարներ են ասում՝ «մերոնց եւ ազգի տակառների», ֆաշիզմն ու ռեւանշիզմը մեզ համար խորթ են»:

Տես էջ 2

20 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Գանձակ. հիշենք եւ դաս առնենք

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գանձակի կամ Կիրովաբադի հայերին ներկայացնող «Միազանգ» ՀԿ-ի հիմնադիր նախագահ **Գրիշա Օգանեզովը**, նույն կազմակերպության գործադիր տնօրեն **Զուլիետա Երեմյանցը** եւ ՀԿ-ի անդամներից **Գրետա Ներսիսյանը** երեկ «Ուրբաթ» ակումբում իրավիրված մամլո ասուլիսի ժամանակ փորձեցին վերհիշել 20 տարի առաջ Գանձակում կատարված դեպքերն ու մանրամասները, ինչպես նաեւ ներկայացրին իրենց զորակցությունը Սերժ Սարգսյանին եւ նրա իշխանությանը:

1988 թվականին մոտ 40 հազար հայ բնակիչ ունեցող Գանձակ քաղաքը նույնանուն գետով բաժանված էր հայկական եւ թուրքական թաղամասերի: Չնայած սովետական «ինտերնացիոնալիզմին», մինչ 1988 թվականի խժդժությունները հայերն այնքան էլ լավ չէին ապրում, հանի որ հայր Ալիեւի ներին հրամանով գլխավոր ինժեների հայ լինելու հանգամանքը պատճառ էր, որ նա «վերածվի» տարային ինժեների, գլխավոր բժիշկը՝ բժշկի եւ այլն: Գետափնյա երկու թաղամասերում բնակարանային շինարարությունն անգամ անհավասար կերպով էր կազմակերպվում, հանի որ դրանցից մեկը հայկական էր, մյուսը՝ ադրբեջանական: Այդ պատճառով շա հայեր անցնում էին ադրբեջանական ափը՝ նորմալ բնակարաններում ապրելու հույսով:

Տես էջ 2

Ողջամտության կոչ

Ելնելով հեռընտրական շրջանի զարգացումներից, մենք մեր մտահոգությունն ենք հայտնում երկրում ստեղծված տագնապալի իրավիճակի առիթով: Ակնհայտ է, որ օրըստօրե խորացող հասարակական երկպառակությունները, միջինգային բեւեռացումները, առճակատման տանող կոչերն ու գործողությունները հղի են անկանխատեսելի հետեւանքներով:

Ուստի մենք կոչ ենք անում մեր ժողովրդի բոլոր խավերին՝ չտրվել սադրանքների, գործել օրենքի եւ օրինականության շրջանակներում՝ ի շահ երկրի կայունության եւ հայոց պետականության անվտանգության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՅՅԱԼ ԽՈՐՀՈՒՐԴ

«Արժանապատիվ քաղաքացի»

«**Ազգ**» օրաթերթը սկսում է ինտերնետային նոր ակցիա, որը կոչվում է «Արժանապատիվ քաղաքացի»: Ակցիան քաղաքական չէ, այլ նպատակ ունի զուտ ազգային պետականության դիրքերից մոտենալու մեր երկրում ստեղծված իրավիճակին եւ, ավելի կարեւորը, լուծումներ առաջարկելու քաղաքական ճգնաժամից դուրս գալու: Մենք չենք սատարում եւ ոչ մի քաղաքական ուժի, կուսակցության կամ հասարակական կազմակերպության, բայց մենք դեմ ենք ազգի պառակտման գործընթացին, որը, ցավոք սրտի, այս օրերին մեծ թափ է առնում մեր երկրում: Մտահոգ Հայաստանում ստեղծված իրավիճակով՝ «**Ազգը**» կոչ է անում իր բոլոր ընթերցողներին եւ ընդհանրապես ափսարհասփյուռ ողջ հայությանը, առաջին հերթին Հայաստանի քաղաքացիներին, ովքեր անտարբեր չեն մեր ազգի ու պետության ապագայի հանդեպ, միանալ մեր ակցիային եւ հայտարարել, որ մենք դեմ ենք հայ ազգի պառակտմանը իշխանամեծերի եւ ընդդիմադիրների, լեռնականների եւ սեւրականների, հայասանցիների ու դաշնակցականների, տակառների եւ ոչ տակառների, դավաճանների եւ ոչ դավաճանների, հիհականների եւ ոչ հիհականների միջեւ: Ակնկալված պառակտման գործընթացը վտանգավոր է մեր պետության՝ Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար եւ այդ պատճառով կոչ ենք անում բոլոր ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ քաղաքացիներին, ովքեր դեմ են ազգը արհեստական կերպով՝ երկու իրար թշնամական ճամբարների բաժանելու գործընթացին, միանալ մեր ակցիային եւ իրենց հաղորդագրությունները թողնել «**Ազգի**» կայքէջում հատուկ ստեղծված ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ էջում՝ www.azg.am, www.azgdaily.com, www.azgdaily.eu:

Հեռացվել են աշխատանքից

Ինչպես տեղեկացանք առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության մամուլի ծառայությունից, նախորդ օրը Լեւոն Տեր-Պետրոսյանի հանրահավաքում ընթերցված հայտարարությունը ստորագրած աշխատակիցները նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներ չեն: Նրանցից Եվրոմիության եւ ԱՀԿ հետ համագործակցության վարչության պետ Վահագն Ղազարյանի նկատմամբ 2007 թվականի ընթացքում կիրառվել է երկու կարգապահական տույժ, 2007-ի հոկտեմբերի 29-ից չի ներկայացել աշխատանքի՝ տարբեր պատճառաբանություններով: Նա ազատված է աշխատանքից:

Արտաքին տնտեսական համագործակցության եւ ներդրումային քաղաքականության վարչության բաժնի պետ Զոհրակ Հովհաննիսյանը շուրջ տասը տարի աշխատել է նախարարությունում եւ ՀՀՇ կուսակցությանը նրա անդամակցությունը խոչընդոտ չի հանդիսացել նրա պաշտոնավարման եւ առաջխաղացման համար: Հաստատելով Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքական պայքարին միանալու եւ ակտիվ քաղաքական գործունեությանը ներգրավվելու իր մտադրության մասին՝ նա խախտել է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի 1-ին մասի դ) կետի պահանջները, ինչի հետեւանքով ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Ակնագործության եւ ոսկեգործության զարգացման գործակալության աշխատակից Արման Սաուխանյանը հայտնել է, որ վերոնշյալ հայտարարությունը ստորագրել է առանց դրա բովանդակությանը ծանոթանալու: Ծանոթանալուց հետո նա հրաժարվել է իր ստորագրած հայտարարությունից:

Երկխոսության կոչ Եվրոպայից

ԵԱՀԿ-ի գործող նախագահ, Ֆինլանդիայի արտգործնախարար Իլկա Կաներվան փետրվարի 19-ի նախագահական ընտրություններից հետո ստեղծված լարվածությունը մեղմելու համար կողմերին կոչ է արել երկխոսություն սկսել: Անդրադառնալով ընտրություններից հետո երեւանում ծայր առած բողոքի ցույցերին, Իլկա Կաներվան նշել է. «Ես հավատում եմ, որ իշխանությունները կարունակեն հարգել ազատորեն հավաքվելու մարդկանց իրավունքը եւ կատարեն հրապարակային հավաքների գնցկացումը՝ առանց խոչընդոտների»: «Թեեւ նման ցույցերը յուրաքանչյուր կենսունակ ժողովրդավարության մասն են, քաղաքական առաջընթացը կարող է ապահովվել միայն բանակցությունների միջոցով, բոլոր կողմերի մասնակցությամբ», ասել է այդ կազմակերպության գործող նախագահը:

Հեռուստաաշտարակները հարվածի տակ

Ազգային անվտանգության ծառայությունից հաղորդում են, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի մի խումբ կողմնակիցներ իրենց թեկնածուի համար ուղիղ եթեր կազմակերպելու նպատակով «Ազատության հրապարակում ամրակել են տարբերակներ ՀՀ հեռուստաաշտարակը, Հանրային հեռուստաընկերությունը, ինչպես նաեւ լսարան ու սփռման տարածք ունեցող ռադիոկայանի շենքերը գրավելու» հարցը: Ըստ ԱԱԾ-ի, այս գործի շրջանակում ձերբակալվել է ոմն Կարեն Տեր-Սեդրանյանը, իսկ ոստիկանության հետ համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում հայտնաբերվել եւ առգրավվել է մեծ քանակությամբ զենք եւ զինամթերք: Ձերբակալված են մի շարք անձինք:

Populus-ի հեռընտրական հարցումները

Բրիտանական հեղինակավոր Populus հարցախուզային ընկերությունը, որը Հայաստանում արդեն մեկ հարցում եւ Exit-poll էր անցկացրել, ներկայացրեց իր հեռընտրական հարցումների արդյունքները: Ըստ ընկերության տնօրեն **Էնդրյու Քուփերի**, ինչպես եւ նախորդ երկու հարցումները, այս հարցումները եւս պատվիրված են եղել Հանրային հեռուստատեսության կողմից եւ բուն ափխաանքը տեղերում կատարվել է Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի ջանքերով, ընկերության՝ Populus-ի մեթոդաբանությամբ: Հարցումն անցկացվել է փետրվարի 21-24-ը, ընտրություններից անմիջապես հետո, հարցվել են Հայաստանի 1500 բնակիչներ, ովքեր մասնակցել են ընտրություններին: Առաջին հարցը եղել է, թե ում եք տվել ձեր ձայնը, ստացվել են հետեւյալ արդյունքները. Սերժ Սարգսյանին՝ 53%, Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ 20%, Արթուր Բաղդասարյանին՝ 13%, Վահան Հովհաննիսյանին՝ 6% եւ այլն: Էնդրյու Քուփերը նշում է նաեւ, որ հարցումներում որոշ արդյունքներ տարբերվում են այն ցուցանիշներից, որոնք գրանցվել են ընտրությունների ժամանակ: Այսպես, եթե Սերժ Սարգսյանի 53%-ը հաստատվում է, ապա Լեւոն Տեր-Պետրոսյանը, ըստ Populus-ի հարցումների, 20% է ստացել, իսկ իրականում՝ մոտ 22%, որոշակի տեղում կա նաեւ Արթուր Բաղդասարյանի ձայների մեջ՝ ըստ հարցման՝ 13%, իսկ ըստ ԿԸՀ-ի՝ նրա օգտին էր քվեարկել ընտրողների 17%-ը, Վահան Հովհաննիսյանի ստացած 6%-ը հաստատվում է հարցման արդյունքներով:

Էնդրյու Քուփերը համեմատելով եղած արդյունքները նախկինում եւ ընտրությունների օրը կատարված ելային հարցումների հետ, նկատում է, որ Սերժ Սարգսյանը բավականին կայուն ձայներ ունի, Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Արթուր Բաղդասարյանի ընտրազանգվածը փոփոխական է, կայուն է նաեւ Վահան Հովհաննիսյանի ընտրազանգվածը: Ըստ Populus-ի, այս կամ այն թեկնածուին կողմ քվեարկած ընտրազանգվածի սեռային եւ տարիքային ոլորտը հետեւյալ տեսքն ունի: Սերժ Սարգսյանը առաջին տեղն է զբաղեցրել բոլոր

տարիքային խմբերում, կանանց եւ տղամարդկանց շրջանում հավասար թվով ձայներ է ստացել, սակայն էական է եղել նրա առաջատարությունը հասկանալ երիտասարդության շրջանում, ըստ Populus-ի, 18-24 տարեկանների 59%-ը նախընտրել է հարցած թեկնածուին: Լեւոն Տեր-Պետրոսյանը ավելի շատ ձայներ է ստացել տղամարդկանցից (24%), քան կանանցից (17%), 65 տարեկանից բարձր տարիք ունեցող մարդկանցից (24%), երիտասարդությունից (17%): Արթուր Բաղդասարյանի վարկանիշը ավելի բարձր է կանանց մեջ (17%), քան տղամարդկանց (11%): Ինչ վերաբերում է թեկնածուների նկատմամբ կողմնորոշմանը, ապա, ըստ հարցումների, 49%-ը դեռ մինչեւ քառորդավը գիտեր, թե ում է տալու իր ձայնը, 36%-ն այդ որոշումը կայացրել է քառորդավի ընթացքում, իսկ 15%-ը՝ վերջին օրերին: Եվ վերջապես, ինչո՞ւ եք կողմնորոշվել դեմի այս կամ այն թեկնածուն: Ըստ հարցման, հիմնական կողմնորոշիչը եղել է տնտեսական գործոնը, հարցվածների 60%-ը՝ կարեւորել է իր թեկնածուի կողմից գործազրկության լուծման հարցը, 56%-ը՝ տնտեսության ճգնաժամ եւ 48%-ը՝ սոցիալական ապահովության խնդիրները: Պոպուլուսին հետաքրքրել է նաեւ հարցվածների կարծիքը, թե արդյոք ընտրությունները ազատ եւ արդա՞ր են եղել: Վերջինները պետք է 1-5 գնահատականի ընտրությունների ազատության աստիճանը: Ընդհանուր պատկերը, ըստ հարցման, հետեւյալն է. 42%-ի կարծիքով՝ ոչ ազատ, իսկ 39%-ի կարծիքով՝ ազատ եւ արդար: 17%-ը միջանկյալ 3 գնահատականի է արժանացրել ընտրությունները: Եթե այս հարցումից հանում ենք Լեւոն Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկածների գնահատականը, որոնք, ըստ Էնդրյու Քուփերի, հասկանալի պատճառներով դժգոհ են ընտրությունների արդյունքներից, ապա մի փոքր այլ պատկեր ենք ստանում՝ 50%-ի կարծիքով ազատ եւ արդար ընտրություններ են տեղի ունեցել, իսկ 29%-ի կարծիքով՝ ոչ այնքան:

Եվ այսպես, ամփոփելով բրիտանական Populus հարցախուզային կազմակերպության արդյունքները, կարող ենք ասել, որ հաջողվել է ստանալ նախագահական ընտրություններում ստացված արդյունքներին մոտ արդյունքները եւ ներկայացնել Հայաստանում քվեարկած ընտրազանգվածի տարիքային եւ սեռային պատկերը, նաեւ այն հարցերը, որոնք առաջին հերթին մտահոգում են մեր բնակչությանը եւ որոնք պետք է առաջնային դառնան արդեն հաղթանակած նախագահի համար՝ իր տնտեսական եւ քաղաքական ծրագրերը կազմելիս:

ԱՐՄԵՆ ՄԵՆՈՒՆՅԱՆ

Գանձակ. հիշենք եւ դաս առնենք

1-ին էջից

Ահա այդ հայերն էլ եղան գանձակյան բռնությունների առաջին զոհերը: Իսկ հայկական թաղամասի բնակիչները դեռ երկար ժամանակ կարող էին ինքնաբեռն զենքերով պաշտպանվել իրենց տներում, մի մասն էլ՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, որ մոտ 650 մարդ էր պարսատկել: «Եկեղեցին վերածվել էր բնակարանի, հիվանդանոցի», հիշում են ներկաները:

«65 տարեկան մի կնոջ եմ հիշում, որին բռնաբարել էին, ակամջջոցները տանելու համար ականջները պոկել: Երբ գնացինք օգնելու, ասում էր, ես՝ ոչինչ, գնացեք, կոմբինատում խմբված հայ աղջիկներ կան, նրանց փրկեք», հիշում է Գրիգա Օգանեզովը, որը նաեւ պատմում է դասախաղության բազմաթիվ խմբերի մասին, ովքեր իրար հետեւից գալիս էին միայն բռնությունների ճանապարհները 100-ոտ անգամ ձեւակերպելու ճշելու: «Սա՝ այն դեպքում, երբ 1620 բողոք դիմում կար դասախաղությունում: Բացի այդ, այնտեղ առավել խաղաղասեր էին, թե ինչ է կատարվել կորած հաղթաքիների հետ, որոնց գտնվելու տեղը չգիտեինք եւ մինչեւ այսօր էլ չգիտենք: Գիտենք միայն, որ 89 թվին 15 հոգու դիակ է հայտնաբերվել Քուռ գետի ափին: Դրանք հոգեբուժարանից տարված եւ կենդանի թաղված հայեր են եղել, որոնցից մեկը թիվ 1 դպրոցի ուսուցչուհի Հասմիկ Տեր-Սահակյանն էր»: Գ. Օգանեզովն ուշադրություն է հրավիրում, որ իրենք հրաժարակում են միայն իրենց հայտնի տվյալներ, իսկ թե իրականում ինչ չափերի են հասել ոճրագործությունները ողջ Գանձակում եւ հայաբաս շրջակա բնակավայրերում, ոչ ոք ճշգրիտ չգիտի: Մինչեռ նախկին Գադրանա ափխարհը իր նորանում շրջաններով՝ Շամխոր, Դաշքեսան, Գեսաբեկ, Խանլար, Գեսաշեն, Թովուզ եւ Դաշքիլ, միշ է ասել, թե հայաբաս էր:

«Գանձակում 1988 թվի նոյեմբերի 22-ին սկսվել են ջարդերը եւ հալածանքները, որոնց դիմացել ենք մինչեւ դեկտեմբեր: Դեկտեմբերի 14-ի վերջին հանրահավաքից հետո մենք անցանք ընդհատակ, որովհետեւ հանրահավաքի մասնակիցներին բռնում էին եւ կոտորածների ենթարկում բանտերում: Հայաստանից էլ մեր կանանց ու երեխաներին տեղափոխող ինքնաթիռներն այդպես էլ չեկան: Երկաթուղի խառնեց բոլոր պայմանավորվածությունները», պատմում է Գրիգա Օգանեզովը:

«Ազգի» հարցին ի պատասխան, թե չկա՞ որեւէ կառույց, որ բոլոր վավերագրությունները ու վերադրածների տեղեկությունները համակարգի, որպեսզի պատմական եղելությունը վաղը հնարավոր լինի ամբողջացնել կոնկրետ փաստերով եւ թվերով, Գ. Օգանեզովը բացասական պատասխանեց, չնայած նաեւ ասեց, որ իրենց ՀԿ-ի գրասենյակում բազմաթիվ տեսաերիզներ, ինչպես նաեւ «Ձինվոր» թերթում կան մանրամասներ Գանձակի իրադարձությունների մասին: Նրանք մեզ են տրամադրում բազմաթիվ նկարներ, որոնցից մեկը միայն ցուցադրելով, պարզաբանում ենք, որ այնտեղ պատկերված է Գանձակի թիվ 10 հայկական, Խ. Աբովյանի անվան դպրոցի առջեւ դրված կիսանդրին՝ թուրքական բարբարոսությունից հետո:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Հրապարակից՝ հրապարակ, ոչ հանուն, այլ ընդդեմ

Զբոսավայրի էր վերածվել երեւանը երեկ: Մեծ ու փոքրով, պատ ու թոռով, ընկեր-ընկերուհիներով մեկնել էին Ազատության եւ Հանրապետության հրապարակներում, այնուհետեւ բռնել մեկից մյուսը տանող ճամփան, ընդ որում երկու ուղղություններով: Միտինգների ու նաեւ թատրաբանավորների խանգարը էր ավելացել, բնականաբար, իսկ չէին նաեւ իրենց ձայնի հզորությունը ձայնարկումներով ցուցադրողները՝ հրաբաց ոգեւորության մեջ ափոթելով դրանց բովանդակությունն ու զուգահեռաբար պահանջելով «Լեւոն, հեռացիր, Սերժիկ, հեռացիր»: Սա ափոթումն էր, որն ուղղված էր Սերժ Սարգսյանին: Տեր-Պետրոսյանի անունը ձայնարկվում էր որպես կանչ Ազատության հրապարակից Հանրապետության հրապարակ եւ հակառակ ճանապարհը կտրող ու հակառակ թեւի միտինգի մասնակիցներով մասնակիորեն համալրված միտինգավորների կողմից: Հենց վերջին կետն էլ օգտագործելով Նալբանդյան եւ Թումանյան փողոցներով Ազատության հրապարակ հասածներին Լեւոն Տեր-Պետրոսյանը հետընտրական միտինգաբերային այս ընթացքում առաջին անգամ դիմեց առաջինը. «Արդեն ստորագրել եմ առաջին հրամանագիրը եւ Սերժ Սարգսյանին շնորհել մեդալ՝ Ազատության հրապարակում ձեր ներկայությունն ապահովելու համար»: Լուրանման այս հունորը հավաքվածներն ընդունեցին ոգեւորված բացականչություններով եւ առավել ակտիվություն ցուցաբերեցին, երբ Սարգիս Հազապյանը հայտարարեց, որ իր նախագահի (ԼՏՊ) հրահանգով դադարեցրել է հացադուլն ու դիմել նրան ՀՀ քաղաքացիություն տանելու: Վերջինս արդեն բարձրանալել էր, որ շնորհել է մեկ այլ հրամանագրով: Նույն կերպ հրահանգին ենթարկվել են նաեւ մյուս հացադուլավորները, որոնք հարթակից այդ մասին հայտարարեցին՝ արժանանալով հասարակության հավանությանը:

Այնուհետեւ Արամ Զ. Սարգսյանը եւս մեկ անգամ տեղեկացրեց, որ չի կարող Թոխմախի Մեր ափխաել եւ փաստ է համարում Տեր-Պետրոսյանի հաղթանակը: Դե, այս հանրահավաքն էլ զուտկ չմնաց պարելու կոչերից եւ անգամ ունեցավ հաստեաեր. «Այս պարը նվիրում ենք Հայաստանի Հանրապետության ազատ քաղաքացիներին», ու հնչեց անկախության համար պայքարի խորհրդանիշ երաժշտության ռեմիքը պարեղանակների խառնուրդի ուղեկցությամբ: Հետո հարկ եղավ «Հին երիվա» պանդոկի ճակատից կախված Սերժ Սարգսյանի մեծադիր լուսանկարը պոկելու փորձ անող երիտասարդներին հարթակից ողջամտության կոչ ուղղել, որը հեղինակեց Արամ Սարգսյանը. «Տղեր ջան, նկարի հետ պայքարելը տղամարդու գործ չէ, նկարը պոլիտիքիկն է: Տղեր ջան ու նաեւ ուսիկաններ, հեռու մնացեք սադրանքից»: Կոչը կրկնելու անհրաժեշտություն էլ եղավ ու ընդունվեց՝ անսացին տղերը:

Վերջին օրերին ԼՏՊ-ական ամենամարդաբաս հանրահավաքը տեղի ունեցավ երեկ՝ մասնակիցների շարքում աննկատ չէին ոչ ընտրական տարիքում գտնվողներն ու անգամ երեխաները, որոնք մեծ ոգեւորությամբ եւ ծնողներին հետեւելով ուրախ-ուրախ բղավում էին եւ՛ պայքար, եւ՛ միացում, եւ՛ Լեւոն, եւ՛ հաղթանակ... Ի վերջո մասսայական զբոսանքը երեխաների եւ ոչ միայն նրանց համար կարող է ոգեւորիչ տարեր ունենալ եւ միասնականության պարտանք ստեղծել: Այնուամենայնիվ, ի տարբերություն նույն թեւի նախորդած հանրահավաքների, պատանիները չէին քանակ կազմողները պահանջ ներկայացնողների շարքում:

ԼԵՌՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սերժ Սարգսյանը ...

1-ին էջից

Այնուհետեւ Սերժ Սարգսյանն անդրադառնալով ընտրական գործընթացին, վստահեցրեց, որ այն «միայն ուժեղացնելու է մեզ, միայն նպաստելու է մեր երկրի հեռագա վերելքին ու իրական ժողովրդավարության արմատավորմանը, եւ այս բարձր ամբիոնից դիմում եմ նախկին թեկնածուներին ու նրանց սատարող քաղաքական ուժերին՝ եկեք համագործակցենք ընդհանուր կոալիցիոն կառավարության ձեւավորման ի նպաստ Հայաստանի զարգացմանը»: Անդրադառնալով մեր երկրում ժողովրդավարության զարգացման մարտին ու շարժիչ ուժ հանդիսացող քաղաքացիներին, Ս. Սարգսյանը շեշտեց. «Յուրաքանչյուր հաղթանակ ինչ որ հանգրվանի վերջն է, բայց ինձ համար, մեր բոլորի հաղթանակը, ընդամենը սկիզբն է գալիքի հաղթանակների եւ մեր սերունդներն այս հաղթանակով են հպարտանալու»:

Այնուհետեւ Ս. Սարգսյանը նշեց, որ այսօր մենք ականատես ենք այն երեւույթի, թե ինչպես են հասարակությունը բաժանել, տրոհել, ականատեսն ենք, թե ինչպես է ագրեսիվ խմբավորումը ցանկանում ամեն գնով հասնել իր նպատակին, ինձ համար այսօր չկա մերոնականներ-ներոնականի խնդիր: «Այսօր կա Հայաստանի խնդիր, մեր արժեքների, մեր ձեռքբերումների խնդիր, որի լուծման համար մենք հավաքվել ենք այստեղ եւ կոչ եմ անում հաղթահարել այս արհեստական բաժանումը»: Սերժ Սարգսյանը հորդորեց ներկաներին չլցվել չարությամբ Ազատության հրապարակում տիրող իրավիճակից, քանի որ այնտեղ նույնպես մեր ընկերներն ու եղբայրներն են, որոնք ակամա դարձել են մեր մի քանիսի վրեժխնդրության ու աթոռապաշտական նկրտումների գործիք» ու խնդրեց զսպել հույզերը եւ հանդուրժողականություն ցուցաբերել:

Վերլուծելով, թե ինչ տվեցին այս ընտրությունները, նա նշեց, որ ժողովրդին երկփեղկման տանողները լավ գիտեն իրենց. «Ես արժանից կտրելու եմ լկտի պահվածը, հարկեր չտալը, զոհբայությունն ու խմբաքեությունը, ժառանգիաս մեր երկրում այլեւս չի լինելու, իսկ իրենց կյանքը միայն մութ անկյուններում պատկերացնողների համար ոչինչ չէր մնում, քան փախչել եւ հարթակներից խոսել ժողովրդավարության մասին, ինչից իրականում իրենք այնքան հեռու են, որքան հեռու են մեր ժողովրդի հոգսերից ու խնդիրներից: Այս ամենի մեջ ինձ համար ամենից անընդունելին մի քանի ընկերների անվայել պահվածքն է, ում սաստանն կարողացավ գայթակղել խոսումներով ու զազրախոսությամբ: Ես վայրկյան անգամ չեմ վատնելու չափն անցածներին իրենց տեղը դնելու համար, անկախ անցած մարտական ուղուց, շնորհված կոչումներից ու պարգեւներից: Հայաստանի շահը վեր է ամեն ինչից», շեշտեց Սերժ Սարգսյանն ու պատմական ժամանակաշրջան համարեց մեր երկրի երկու ընտրությունները:

Այնուհետեւ ընտրված նախագահը նշեց, որ չնայած որոշ մարդիկ չկարողացան օգտվել իրենց ազատություններից ու կորցրին կոռեկտությունը, չափն անցան, սակայն դա չի նշանակում, որ մեր քաղաքը պիտի կաթվածահար լինի ու խոսացավ պատասխանել ամեն մի քաղաքացու խոսքի ազատության իրավունքը եւ հայտարարեց. «Ես ամենավճռական քայլերը կձեռնարկեմ մեր երկրում առկա քաղաքական կայունության ամրապնդման, հասարակական կարգ ու կանոնի պահպանման ու հասարակության բնականոն կյանքի ապահովման ուղղությամբ»: Վկայակոչելով Սուրբ գիրքը, Սերժ Սարգսյանն ասաց. «Ամեն ինչ ունի իր ժամանակը, այսօր քարեր հավաքելու ժամանակը չէ, այսօր քարը փեշից թափելու ժամանակն է, այսօր ոխակալության ժամանակը չէ, այլ խաղաղության ժամանակն է, միասնության ժամանակն է... Առաջ Հայաստան, առաջ դեպի բարգավաճ ու անկոտրում ու երազած մեր Հայաստանը, դեպի նոր հաղթանակներ»: Հանրահավաքի մասնակիցները, չնայած անձրեւին, մի քանի ժամ ունկնդրեցին հայ էստրադայի ճանաչված երգիչ-երգչուհիների ելույթները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Լեւոն Տեր-Պետրոսյանը 10 տարի ուսումնասիրել է հոգեբանական բոլոր հնարները

Հոգեբանական տարբեր հնարներով հասարակության գիտակցության վրա ազդելու մեթոդները այս կամ այն չափով գործում են գրեթե բոլոր ընտրությունների ժամանակ, սակայն միշտ է պատահում, որ նախագահական ընտրություններում առաջադրված թեկնածուներից մեկը, օրինակ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, այդ հնարներին տիրապետի այնպիսի վարպետությամբ, որի համար, ըստ հոգեբան **Կարինե Նալչաջյանի**, պահանջվում է մոտ 10 տարի: Ասվածը միանգամից համոզիչ դարձնելու համար բերենք նրա նշած ամենաթարմ օրինակը. նախորդ օրը Ազատության հրապարակում Լեւոն Տեր-Պետրոսյանը ելույթ է պարել իր 2 աջակիցների հետ՝ հասարակ ժողովրդի վրա կիրառելով հոգեբանական տերմինով ասած՝ «հասարակ մարդու մանիպուլյացիան»: Հոգեբանական այս հնարը գործադրվում է հանրությանը ցույց տալու, որ ինքը նրանցից մեկն է, կարող է նրանց պես թաղկինակը ձեռն առնել ու ցասկոտել: Մարդիկ հրճվում են, հուզվում, հիանում՝ անտեղյակ հոգեբանական այն բոլոր տեխնոլոգիաներից, որ իրենց նախընտրելի թեկնածուն գործի է դրել եւ իրենց որպես գործիք օգտագործել քարոզարշավի հենց սկզբից:

«Հոգեբանական հայտնի մանիպուլյացիաներից է պիտակներ փակցնելը. եթե ցանկանում ես մարդկանց համոզել քո ճշմարտացիության մեջ, պետք է անպայման պիտակներ փակցնես՝ «ավազակներ, դավաճաններ, տականներ»: Բոլորին հայտնի է, թե թեկնածուներից ով է այդպիսի պիտակներով խոսում, դա նկատելի էր նաեւ Արթուր Բաղդասարյանի եւ մյուսների ելույթներում՝ չափի ու սահմանների տարբերությամբ: Նայած թե ո՞ւր են տանում այդ պիտակները, ինչ արարքների են մղում: Եթե ժողովրդի հուզականությունը բարձր է, դրանք բավականին ազդու են: Պիտակներից բացի, Ազատության հրապարակում կիրառվում է նաեւ «փայլուն ընդհանրացումների» մանիպուլյացիան, օրինակ՝ «Նրանց կոպտժի Հայաստանի անկախ դասարանը», այդ լսելով մարդիկ միանգամից ոգեշնչվում են, մտովի «փայլուն ապագա» տեղափոխվում»:

Հանրության ենթագիտակցության վրա հրաշալի է ազդում Տեր-Պետրոսյանի կիրառած հաջորդ մանիպուլյացիան, որը հոգեբանները կոչում են տրանսֆերի՝ փոխանցման մանիպուլյացիա: Երբ մեկը ներքին կայի է հասնում իր եւ ազգային հերոսի կամ անբասիր հեղինակություն ունեցող երջանկահիշատակ մեկի հետ, խոսում է նրանց անունից այնպես, որ մարդիկ զգում են նրանց հոգեւոր ներկայությունը, դրանով հրաշալի է ազդում հանրության վրա ու հասնում է իր նպատակին: Հոգեբանական այս հնարով Լեւոն Տեր-Պետրոսյանի համար տրանսֆերի օբյեկտ են դարձել Կարեն Դեմիրճյանն ու Վազգեն Սարգսյանը:

«Հայաց» ակումբ հրավիրված Կարինե Նալչաջյանը երեկ նշեց եւս մեկ՝ «վկայակոչման» մանիպուլյացիայի մասին, որը ամենից շատ նկատելի էր Արարատ Գեղամյանի քարոզարշավի ընթացքում: Այս տեխնոլոգիայով անհատը փորձում է իր խոսքը արժեւորել հայտնի մարդկանց ասույթները մեջբերելով կամ նրանց անձամբ ճանաչած լինելու մասին պատմելով: Այս մանիպուլյացիան բավականին տարածված է մեր կյանքում, դրանից հաճախակի սիրում են օգտվել իրենց կարեւորելու ձգտում ունեցողները:

«Դարձյալ մեծածավալ մանիպուլյացիաներ են եւ դրանց իմացությամբ զինվածները ներգործում են մարդկանց մտքի, գիտակցության վրա: Կարեւորն այն է, թե ինչ նպատակով են դրանք կիրառվում, որովհետեւ մեզանում ձեւավորված սոցիալական 2 խմբերը հոգեբանական տարբեր վիճակներում են: Հանրության մի հատվածը կատարել է իր ընտրությունն ու հետեւում է իրադարձություններին՝ առանց կիսատության զգացում ունենալու, իսկ մյուս հատվածը հոգեկան լարվածության մեջ է, որովհետեւ նրա համար ընտրությունները դեռ ավարտված չեն: Ամենից ուժեղ լարվածության մեջ Լեւոն Տեր-Պետրոսյանն է, մյուսներն անհամեմատ ավելի հանգիստ են: Լարվածություն կա նաեւ հաղթած ճամբարում, որովհետեւ ներքաղաքական այսպիսի վիճակում նրանք չեն կարողանում ճաշակել հաղթանակի բերկրանքը», ասաց Նալչաջյանը:

Իր պարտության հետ հաշվելուց հանդուրժող հրաժարվող լեւոնական թեւն այս պահին օգտագործում է երիտասարդների հուզական պոռթկումները՝ իրենց ճանապարհին խոչընդոտող ամեն ինչ ավերելու, ջարդելու տենչով, իսկ ինչ կլինի դրանից հետո, այդ երիտասարդները չեն գիտակցում, որովհետեւ մի քանի ամսվա ընթացքում նրանց գիտակցությունը դարձրել են թունելային, «Նրանք անընդհատ ընդունում են ամեն մի ասվածը, դա հիպնոսի պես մի բան է, որը դեռի կործանում է տանում: Սա նշանակում է, որ թուլացել է ազգի հոգեբանական պաշտպանվածությունը: Չեմ ուզում հոռետես լինել, բայց գուցե այսպես է գալու մեր վերջը»:

ՌՈՒԲԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Դիմել ենք Սահմանադրական դասարան՝ չեղյալ համարելու ընտրությունները»

Երեկ Լեւոն Տեր-Պետրոսյանի մամուլի քարտուղար **Արման Մուսինյանը** լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց, որ իրենք չեն կարողացել իրագործել ընտրությունների արդյունքների 300 վերահաշվարկի դիմում: Դիմել են Սահմանադրական դասարան՝ հայտնելով, որ չեղյալ են համարում ընտրությունները: Տեր-Պետրոսյանի կողմնակիցների ձերբակալությունները Մուսինյանը որակեց իշխանությունների կողմից իրագործված նպատակ՝ կազմալուծելու շարժման կառուցվածքը. «Բայց սա ավելի էֆեկտիվ է դառնում՝ մարդիկ գնալով ավելանում են:

Ազատության հրապարակում արդեն 11 հոգի անժամկետ հացադուլ են անում: Դիմել ենք միջազգային կառույցներին, որ հաղթաթերաթը մեզ չի տրամադրում ճարտարապետության մեջ՝ պատճառաբանելով, թե ազատ մեքենա չունեն, որն իր հերթին օրենքի կոպիտ խախտում է: Սակայն մեր վճռականությունը չի պակասել, ժողովուրդը հուսահատ չեղավ. պատրաստ ենք հրապարակում մնալ եւ շարունակել գործողությունները այնքան ժամանակ, մինչեւ իշխանությունը հանձնվի ժողովրդին»:

Մուսինյանն ասաց, որ Ազատության հրապարակից ոստիկանությունը առեւանգել է Սամվել Հարությունյանին, Սուրեն Սուրենյանցին, չի բացառվում նաեւ, որ Տեր-Պետրոսյանին առեւանգեն:

Հարցին, թե Տեր-Պետրոսյանի թիմակիցները դիմել են մարդու իրավունքների պատգամավորին, Մուսինյանը այսպես պատասխանեց. «Դիմել ենք Տեր-Պետրոսյանի շտաբների կնման հարցով, որ իշխանությունները իրականացնում են տարբեր մարզերում: Արման Հարությունյանը խոստացել է ուշադրություն դարձնել հացադուլավորների առողջությանը, քանի որ քաղաքացիական հասարակությունը մերժում է բժիշկներ տրամադրել»:

Վերջերս հրապարակած Աժ յոթ պատգամավորներից, որոնց մասին Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտնել էր, թե իրեն են միացել, երկուսն առեղծգավոր դիմումով հրաժարվել են այդ հայտարարությունից՝ Տիգրան Ստեփանյանն ու Արման Մխիթարյանը:

«Ազգի» հարցին, թե ինչպե՞ս կմեկնաբանի Մուսինյանը Տեր-Պետրոսյանի այն արտահայտությունը, որ ինչեցվել էր հանրահավաքներից մեկի ժամանակ, թե ով իրենց հետ չէ, ազգի տականք է, Մուսինյանը փորձելով արդարացնել իր «նորընտիր» նախագահին, ասաց, որ խոսքն այդ դեպքում վերաբերում էր նրանց, ովքեր կազմում են ավազակախմբության մաս, օրինակ՝ «Թոխմախի Միեր, Ուրբոն եւ այլն»: Մինչդեռ «տականք» բառը Տեր-Պետրոսյանն օգտագործել էր բոլոր նրանց հասցեին, ովքեր իր կողքին չեն:

ՆԱՐԻՊ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 11.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրն է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը:

◆Ժամը 12.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրն է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ա. Բախչագուլյանը:

◆Ժամը 12.00-ին «Հայաց» մամուլի ակումբի հյուրն է ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը: Թեման՝ «Հեղընտրական զարգացումներ»:

◆Մեկ ժամ անց նույն ակումբում կլինի քաղաքագետ Ալեքսանդր Մանասյանը: Թեման՝ «Հեղընտրական զարգացումներ»:

◆Ժամը 15.00-ին Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենքում կգումարվի հանձնաժողովի հերթական նիստը:

Արդյոք ՀՅԴ-ն փակո՞ւմ է դուռը հետագա կոալիցիոն համագործակցության առաջ

Նախորդ օրը տարածած հայտարարությունից հետո երեկ ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ **Արմեն Ռուստամյանն** ու ՀՅԴ բյուրոյի անդամ **Վահան Հովհաննիսյանը** հարկ համարեցին լրացուցիչ մեկնաբանություններ տալ՝ նորից կանգ առնելով հայտարարության կարեւոր պահերի վրա: Որ ընտրություններում կեղծիքներ են եղել՝ գնահատականը սեփական վերլուծությունների արդյունքի է, բայց ընտրությունների արդյունքները չեն վիճարկում, քանի որ եղածը ընտրական համակարգի բացերի արդյունքի է, ինչի հետեւանքով չի ապահովվում քվեատուփերում եղած քվեաթերթիկների եւ ընտրողների ձայների համապատասխանությունը, իսկ ընտրությունների ընթացքը վերահսկելու կամ ընտրակեղծիքները կանխելու եւ հետագայում քվեաթերթիկների համապատասխանությունը քվեներին ապահովելու համար քաղաքացիական հասարակության եւ քաղաքական ուժերի հնարավորությունները սահմանափակ են: ՀՅԴ-ն այդ մասին գիտեր այն ժամանակ, երբ առաջարկում էին, որ ընտրական գրանցամատյանները հասանելի լինեին, երկու օրն էլ բավական կլիներ սուղելու, ինչը վերահսկողության գործիք կլիներ եւ էապես կնվազեր իրավիճակը: Բայց հիմա հնարավոր չէ սուղել կեղծիքները եւ խոսակցությունը տեղափոխվում է ոչ առարկայական դաշտ, հենց այդ պատճառով դաշնակցականները չեն վիճարկում ընտրությունների արդյունքները: Ա. Ռուստամյանը վերսին հիշեցրեց, որ իրենք ընտրել են կոալիցիոն հուշագրի դադարեցման երրորդ կողմերի համաձայնությամբ ճանապարհը, եւ այդտեղ եւս պահպանվել է նախընտրական շրջանի ՀՅԴ տարաբանությունը՝ «ընդդեմ մեկի կամ ի շահ ուրիշի» չգործելու: Նաեւ պատասխաններից կարող են հրաժարվել, դրանք իմանալի պահելու խնդիր ՀՅԴ-ն չի տեսնում:

ՀՅԴ-ն ելք չի տեսնում է ընտրակեղծիքները լիարժեք ուսումնասիրելու եւ խախտում անողներին պատժելու մեջ. մինչեւ այդպիսի գիծ չքաշվի՝ գործընթացների նորմալ ընթացք ապահովել հնարավոր չի լինի: ՀՅԴ առաջնորդները թ՛ւ իշխանություններին, թ՛ւ փողոցում կանգնած ընդդիմությանը կոչ ունեն ուղղված՝ առաջինը պետք է դժգոհողներին օտար չհամարի, բռնություն չտերմանի, երկրորդը իշխանությունը բռնի ուժով փոխելու ցանկություն չունենա: Քաղաքական դաշտում ընդդիմության գործունեության համար պետք է լիարժեք պայմաններ ապահովվի, եթե դա չկա, ընդդիմությունը գործոն կդառնա փողոցում: Եվ նոր կառավարությունն էլ պետք է ձեւավորվի այնպես, որ իրենց մասնակցած խնդիրների լուծումը երեւա:

Վահան Հովհաննիսյանը եւս մի քանի նկատառում հայտնեց: Ըստ նրա՝ 6-8 ընտրատարածք ուղղակի խայտառակ են անում եւ արպակում ընտրությունների պատկերը, որոնք դեռ կասվի: «Ոչ մի տարաբանական սահմանում չի ներառում, եթե փող են բաժանում, ժողովրդի քվեի եւ քվեատուփի միջեւ գոյություն ունի խզող գործոն», նկատեց Վ. Հովհաննիսյանը՝ պնդելով, որ ընտրակաշառը հրաժարած է եղել եւ ընտրակաշառ բաժանողների մեջ այլի են ընկել երեք թեկնածուներ: Անուններ չտվեցին, բայց ենթադրաբար այդ խոսքը վերաբերում էր ամենաշատ ձայն հավաքած թեկնածուներին:

Լրագրողների հարցերից էր, թե արդյոք ՀՅԴ-ն կասկածի տակ է առնում ընտրված նախագահի լեգիտիմությունը: Ըստ Ա. Ռուստամյանի՝ լեգիտիմության խնդիրը պարունակում է իրավական բաղադրիչ, երբ կասկածի տակ ես դնում ընտրությունները, պետք է առաջադրես կեղծիքների արժանահավատությունը: Վ. Հովհաննիսյանն էլ ավելացրեց, թե երբ վերեւից տրվում է հրահանգ՝ ամեն գնով հաղթելու, դժվար է ասել, թե ինչ կա «ամեն գնով»-ի տակ. «Գիտենք, որ դա եղել է, բայց դասարանում ապացուցել չես կարող»: Բայց Վ. Հովհաննիսյանը հույս է իրեն ձայն տված 100 հազար նորմալ մարդկանցով, ովքեր ոչ հարբած պարում են հրապարակում, ոչ էլ ծաղկեպսակ են դնում թեկնածուի տան մոտ:

Ռուստամյանը նկատեց, որ այս ընտրություններից հետո շատ բան պարզ դարձավ՝ որեւէ նախագահ, որեւէ իշխանություն չի կարող հաշվի չնստել եղածի հետ, եթե հաշվի չնստի՝ երկրի դրական ռեսուրսը կփոքրանա:

«Ազգի» հարցին, թե արդյոք այս հայտարարությամբ ՀՅԴ-ն փակո՞ւմ է դուռը հետագայում նոր կոալիցիոն առաջարկների դիմաց, բանախոսները պատասխանեցին, թե շատ բան կախված է լինելու, թե ինչպե՞ս կհաղթահարվի ներքաղաքական լարվածությունը, ինչպե՞ս կընդունվի իրենց հայտարարությունը, համագործակցության դաշտ հնարավոր կլինի՞ ձեւավորել, թե՞ ոչ. ամեն դեպքում համագործակցության հարցը դեռ վերջնական փակված չէ: Ըստ Վ. Հովհաննիսյանի. «Կախված է նրանից, թե զուգակիցների մոտ ո՞ր տրամադրությունը կհաղթանակի՝ երկրի ճակատագրով մտահոգությո՞ւնը, թե՞ այն ուրախությունը, որ ՀՅԴ-ականների հրաժարականներով նոր պատասխաններ են բացվելու եւ կարելի է այդ տեղերը գրավել»:

Եթե Քոչարյանը վարչապետ լինի՞, անձով պայմանավորված, Դաշնակցությունը գործելակերպ չի կառուցում, իսկ եթե այսօրվա դիմակայությունից արյուն թափվի՝ մեզի բոլորս կմեղնենք արյան տակ, ողջ հասարակությունը, պետք է կանխել այդպիսի զարգացումը: Եվ ՀՅԴ-ն գտնում է, որ իրենց հայտարարությունը նպաստում է լարվածության թուլացմանը: Ըստ Վ. Հովհաննիսյանի՝ մի կողմից իշխանական կողմը պետք է ընդունի խախտումների առկայությունը, մյուս կողմից՝ փողոցի ընդդիմությունը պետք է ընդունի՝ որ ճարտարապետն են ընտրախախտումների սկզբնավորման. օրինակ՝ Ջհանգիրյանը, որ մի քանի օր առաջ խոսում էր ընտրակեղծիքներից, ինժեներն է անցյալի ընտրախախտումների: Մի խոսքով, ծայրահեղականացված մոտեցումներից կողմերը պետք է հրաժարվեն, այդ դեպքում միայն լարվածության թուլացման բանալին կգտնվի:

ՄԱՐԻՆԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ.Գ. Ի դեպ, ՀՅԿ խորհրդարանական խմբակցության ղեկավար Կարեն Կարապետյանից տեղեկացանք, որ մոտ օրերս տեղի կունենա ՀՅԴ հայտարարությունը ինքնակոչ կոալիցիայի նիստ, իսկ ընդհանուր առմամբ ՀՅԿ-ում հակվածություն կա առաջիկայում էլ ՀՅԴ-ի հետ համագործակցելու:

Օղերայի հրապարակը, հեռուստաթերը եւ... իրականությունը

Օբյեկտիվը հաճա՞խ է ոչ օբյեկտիվ

Երբ իրականությունը առօրյա է, սովորական դարձած հրաձանուս, բնավ էլ չես գիտակցում, որ այդպիսին չեն երեւույթները այլոց համար: Իմացության, ճանաչման ոլորտի կարողությունների տիրապետելը դեռեւ չի նշանակում, թե բացատրության, դարգաբանման, մեկնաբանությունների կարիք չունեն մյուսները:

Թե ինչ է կատարվում Ազատության հրապարակում, այլ մեկնաբանության թեմա է եւ դեռեւս բազմաթիվ առիթներ կլինեն անդրադառնալու: Բայց երբ այդ ամենին ականատես ես մայրաքաղաքի կենտրոնում, իսկ արդեն տանը հեռուստաէկրանից այդ իրողության մասին ոչինչ չի ասվում, ուղղակի զարմանալի է: Անգամ հանատարած գրաքննության դեպքում, եթե այդպիսին առկա է մեր երթում, չի կարելի առաջնորդվել այն դարգունակ մոտեցմամբ, որ եթե ոչինչ չեն ասում, ուրեմն այդ երեւույթը չկա, գոյություն չունի:

Պահվածը, որ ուղեգրել են հայաստանյան հեռուստաընկերությունները, առավելապես հայտնի խոսքոր, չթաղող թաղնի կեցվածքն է հիշեցնում, մինչդեռ ամենայն համոզվածությամբ կարելի է ասել, որ դա չի նպաստում կայունության պահպանմանը, չի նպաստում հասարակական գիտակցության մութ ու լույս ծալքերում նորմալ, գիտակից, հավասարակշիռ վերաբերմունքի ձեւավորմանը:

Եթե «անդադր» եթեր մատուցելու նպատակը օղերայի հրապարակում հավաքվածների բարերը ցասացնելն նպաստելու մտավախությունն է, ապա նույն հաջողությամբ իրականությունից կտրված եթերն ուղղակի տամադրում է սեփական աչքերով ցաս բան տեսնելու ցանկության բավարարմանը: Իսկ եթե «չեմ տեսնում, ուրեմն չկա» մոտեցումը արդեն նաեւ քաղաքություն է, ապա դա հաղարական կարճատեսություն է:

Ինչ վերաբերում է «ափարհասփյուռ» Հանրային հեռուստաընկերության «Հայուս» լուսավական ծրագրի հաղորդումներին, ապա այստեղ ուղղակի դասական օրինակներ կարելի է սանալ այն մոտեցման, թե ինչպիսին Ցոեսք է լինի լուսվությունը: Տեղեկացված, հասարակական կյանքին յուրօրինակ ձեւով մասնակից լինելու ձգտումը հեռուստաէկրանի մոտ է պահում մարդկանց, բայց ինչ են տեսնում եթերում:

Նախ, հայրենի ոսիկանությունն էլ, որ վերջին երկու օրերի մի քանի նյութերն էր պատրաստել եթերում պտտելու համար, ռեպորտաժի այնպիսի կառուցվածք էր ընտրել, որ առաջին տպավորությամբ խոսվում էր անդրխաղաղվկիանոսյան ինչ-որ տարածի մասին: Իսկ «պլանյաս» միջնգավորի մասին պատմությունը բնավ էլ արդյունավետ լինել չէր կարող, հանի որ այդպիսի միջս կարելի է գտնել ուզածդ 100 հոգանոց կուսակցման մեջ, այն էլ՝ թմրանյութերի հանդեպ հակումների առավել ցայտուն արտահայտումներով:

Մի դեպ օր էլ առանց բացատրության միայն ընթերցվում էր այն տեղեկությունը, թե Նախագահ Ռոբերտյանը դիվանագիտական ամեն ինչից՝ պատշգնից, կոչումից ու էլ ինչ գիտեմ ինչից զրկել է մի երեք մարդու: Թե ինչո՞ւ է նման բան անում երկրի գլխավորը, այդպես էլ մի երկար ժամանակ մնաց «չբացահայտված»: Մինչդեռ բացատրությունն առավել քան մատչելի ու ընդունելի կարելի էր ներկայացնել, այն էլ համապատասխան հնարավորությունների առկայությամբ:

Առավել հաճախ չչինելով հեռուստադիտող՝ վերջին օրերի եթերից կարելի էր միայն նույն այնպիսի խաբկանքի մեջ հայտնվել, ինչպիսին, երեւի, չի հաղթահարում ընդդիմությունը: Բնավ էլ ազգությունն չենք խնդրել վերադարձը ՀՀՇ-ի, բնավ էլ ազգությունն չենք անարժանապատիվ, եթե որն ԼՏՊ-ի կողմից չենք, բայց դա բնավ էլ չի նշանակում, թե հեռուստաեթերն է արտահայտում այդ իրականությունը:

Ինչեւէ, ջայլամն ամուր ու երկար ոտքեր ունի, բայց շատ փոքր, ընդգծեմ՝ թաղնի գլուխ: Իսկ փոքր գլխում դժվար թե «մեծ» մտքեր տեղավորվեն... Բայց գոնե ավելի «լայն» մտածելու ցանկություն պետք է դրսեւորել, այլապես միշտ չէ նաեւ այն խոսքը, թե մարդ իր տեսածին է հավատում:

ԱՐԱՐԱՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՀԵՌՈՒԳՐԵՐ

Յարգելի Պրն Սերժ Սարգսեան՝
Վարչապետ Հայաստանի Հանրապետության

Յատուկ հետաքրքրությամբ հետեւեցանք Նախագահական ընտրարշավի մանրամասնությանց եւ այսօր կու գանք գոհունակությամբ ողջունելու Ձեր ընտրությունը իբրեւ Հայաստանի Հանրապետության երրորդ Նախագահ:

Ձեր երկար տարիներու վաստակաշատ գործունեությունը հայրենիքի պաշտպանության դիրքերուն վրայ, ինչպես նաեւ՝ Ձեր վարչագիտական ձիրքը վստահաբար լիովին պիտի արժեւորուին յառաջիկայ տարիներուն ընթացքին առաջնորդելու համար մեր հայրենիքը դէպի առաջիկայ եւ բարեբեր առաջայ:

Յանուն Արեւելեան Ամերիկայի եւ Գանատայի մեր բոլոր շրջանակներուն կու գանք յաջողութիւն մաղթելու Ձեր հայրենանուէր առաքելութեան:

Արտաքին բարեմաղթութիւններով՝

Ի դիմաց ՈԱԿ Արեւելեան Ամերիկայի եւ Գանատայի Շրջանային Վարչութեան

Մարօ Պեսրոսեան — *Բաբգէն Մկրեան*
Ատենադպիր — *Ատենապետ*

Յարգելի Պրն Սերժ Սարգսեան՝
Վարչապետ Հայաստանի Հանրապետության

Թէքէեան Մշակութային Միութեան Ամերիկայի եւ Գանատայի կեդրոնական վարչութեան եւ հայրենի անդամակցութեան կողմէ այսու կու գանք ջերմապէս շնորհաւորելու Ձեզ, Հայաստանի Նախագահ ընտրուելուդ առթիւ:

Միութեանս համաստան շրջանակները եւ անդամակցութիւնը այս բարեբաստիկ առիթով Ձեզի եւ Ձեր գլխաւորած ղեկավարութեան կը մաղթեն ուժ ու կորով՝ ամրապնդելու համար մեր հայրենիքի ազատ գոյութիւնը, առաջնորդելու Արցախի անկախութիւնը եւ արմատաւորելու հայրենիք-Սփիւռք սերտագոյն յարաբերութիւնները՝ ի նպաստ հայ ժողովուրդին:

Յարգանքներով՝

Տոքթ. Նուպար Պէրպէրեան — *Տոքթ. Յարութիւն Արզումանեան*
Ատենադպիր — *Ատենապետ*

Նույնիմաստ շնորհավորական նամակ է հղել ՀՀ Վարչապետին Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը:

Յարգարժան Տիար Սերժ Սարգսեան՝
Վարչապետ Հայաստանի Հանրապետության

Յանուն Աւանդապահ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Համախմբումին այսու կուգանք շնորհաւորելու Ձեզ Հայաստանի Հանրապետութեան երրորդ Նախագահ ընտրուելու ուրախ առիթով:

Վերջերս Երեւանի մէջ Ձեզի հետ մեր հանդիպման ընթացքին Ձեր մէջ տեսանք հայ ժողովուրդի առաջիկայ ապագայի կերտման հաւատիքը տուող բացառիկ անձնատուութիւնը, որ իր ամբողջ կարողութեամբ պիտի կարենայ յառաջ տանիլ Հայաստանը՝ ամրապնդելով անոր տնտեսութիւնը, առաքինութիւնը եւ ժողովրդավարական հիմքերը:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը 1921 թուականէն սկսեալ միշտ ալ եղած է Հայաստանի եւ անոր պետականութեան եւ ժողովուրդին կողքին, եւ այժմ եւս մեր պատասխանատուութիւնը կը յայտնենք ամբողջովին աջակցելու Ձեր աշխատանքներուն Սփիւռքի թէ Հայրենիքի մէջ:

Յաջողութեան մաղթանքներով՝

ԱՌԱՆՑԱՊԱՏ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ

ՀՀ Հանրապետական Կուսակցության Նախագահ,
ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանին
Մեծարգո պարոն Վարչապետ

Շնորհավորելով Ձեզ Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնում ընտրվելու առիթով, հույս ենք տածում, որ գնահատելով երկու տասնամյակների անցած ուղին՝ երկրում կիրականացնեք համակարգային լուրջ փոփոխություններ:

Մաղթում ենք Ձեզ քաղաքական կամք՝ երկրի առաջ ծառացած լրջագույն հիմնախնդիրները լուծելու, առաջընթաց ապահովելու, իշխանությունների նկատմամբ ժողովրդի վստահությունը վերականգնելու գործում:

ՀԴԿ Հանրապետական խորհրդի անունից
ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ, 25.02.2008 թ.

2007-ն ամփոփվեց

Անապահովության աճել են վարկերի տրամադրումն ու ավանդների ներգրավումը

Հայաստանի Հանրապետության 2007-ի սոցիալ-տնտեսական ցուցանիշները երեկ ներկայացրեց ազգային վիճակագրական ծառայության պետ Ստեփան Մնացականյանը: Նա հաստատեց անդրադարձավ անցյալ տարվա ընթացքում արձանագրված մի շարք ցուցանիշների: Համաձայն դրանց, անցյալ տարի տնտեսական աճը կազմել է 13,7 տոկոս, մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ցուցանիշը կազմել է 973 հազար դրամ կամ 2844 դոլար, նախորդ տարվա 825 հազար դրամի կամ 1983 դոլարի դիմաց: Արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 2,6 տոկոսով, գյուղատնտեսությանը՝ 9,6 տոկոսով, շինարարությանը՝ 19,7 տոկոսով, մանրածախ առեւտրի շրջանառությանը՝ 10 տոկոսով, ծառայություններինը՝ 21,2 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառության ծավալը կազմել է 4 մլրդ 439 մլն դոլար եւ նախորդ տարվա համեմատ աճել է 39,7 տոկոսով: Արտահանումն աճել է 17,5 տոկոսով եւ կազմել 1 մլրդ 157 մլն դոլար, ներմուծումը՝ 49,7 տոկոսով եւ կազմել 3 մլրդ 281 մլն դոլար:

Բանկերի եւ վարկային կազմակերպությունների տրամադրած վարկերը 2007-ին գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը 78,7 տոկոսով, բնակչությունից ներգրավված բանկային ավանդները՝ գրեթե 42 տոկոսով: Անցյալ տարի Հայաստան է այցելել 510 հազար զբոսաշրջիկ, նախորդ տարվա 382 հազարի փոխարեն: Հայաստանից զբոսաշրջության նպատակով մեկնել է 467 հազար մարդ:

Անշարժ գույքի գործարքներն ավելացել են: 2007-ին իրականացվել է մոտ 60 հազար օտարման գործարք, նախորդ տարվա 51 հազարի փոխարեն:

Ստեփան Մնացականյանը հայտնեց, որ Հայաստանի մշտական բնակչության թվաքանակը տարեվերջին կազմել է 3 մլն 229 հազար, որը տարեսկզբի համեմատ աճել է 7 հազար մարդով: Անցյալ տարի գրանցվել է բացարձակ թվաքանակի աճ: Գրանցվել են 40142 ծնվածներ, 2006-ի 37639-ի դիմաց: Ամուսնությունների քանակն ավելացել է 7,4 տոկոսով, ամուսնալուծություններինը՝ 4,8 տոկոսով:

«Ազգի» հարցին, թե ինչպիսի՞ փոփոխություններ են կրել միգրացիոն տեղաշարժերը, ազգային վիճակագրական ծառայության պետը, ներկայացնելով համապատասխան աղյուսակները, պատասխանեց, որ 2007-ին նկատվել է մեկնողների եւ եկողների բացասական տարբերությունը, բացասական մնացորդը 1000 բնակչի հաշվով կազմել է 1,9, իսկ 2006-ին 2,1 էր: Ուղեւորաշրջանառության հաշվեկշիռը բացասական է 2,9 հազարով, նախորդ տարվա 21,9 հազար դրական հաշվեկշռի փոխարեն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանում մշակվում է անգամ ներկրված մոլիբդենի խտանյութը

Այս մասին երեկ լրագրողներին հայտնեց առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության վարչության պետ **Արթուր Աուդյանը**: Նա հայտնեց, որ Հայաստանում ներկայումս երեք ընկերություններ մշակում են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրած մոլիբդենի խտանյութը, ինչպես նաեւ ներմուծված խտանյութ, քանի որ Հայաստանում արդյունահանված արդեն չի բավարարում այդ ձեռնարկությունների պահանջարկը: Սպանում ենք ավելի բարձր արժեք ունեցող եւ թանկ վաճառվող ֆեռոմոլիբդեն, ոսկեհում: Այս ոլորտի առավել խոշոր ընկերություններ «Մաքուր երկաթի գործարանն» անցյալ տարի թողարկել է 45,7 մլրդ դրամի արտադրանք, ավելացնելով արտադրության ծավալները 3 տոկոսով, իսկ «Արմենիան մոլիբդեն փոդաֆբրիքը»՝ 32 մլրդ դրամի արտադրանք, որը նախորդ տարվա համեմատ ավելի է 32 տոկոսով: Վարչության պետը հայտնեց նաեւ, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում մշակվում են պղնձաձուլարան ստեղծելու ծրագիր: «Արմենալը» թողարկել է 14 մլրդ դրամի արտադրանք: Ընդհանրապես այժմ խնդիր է դրված զարգացնելու վերամշակման ոլորտը:

Անդրադառնալով ոլորտի ցուցանիշներին, Արթուր Աուդյանը հայտնեց, որ ընդհանուր առմամբ թողարկվել է 228 մլրդ դրամի արտադրանք, նախորդ տարվա 220 մլրդ դրամի փոխարեն: Դոլարի արժեզրկմանը որոշակիորեն փոխհատուցում են մեծաղների կայուն բարձր գները միջազգային շուկայում: Խոշորագույն ընկերությունը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը թողարկել է 82 մլրդ դրամի արտադրանք, Ագարակի պղնձամոլիբդենայինը՝ 15 մլրդ դրամի, Կապանի «Դինո գոլդ մայնինգը»՝ 6 մլրդ դրամի: Ցեմենտի գործարաններից «Արարատցեմենտն» արտադրել է 23 մլրդ դրամի արտադրանք, նախորդ տարվա համեմատ արձանագրելով 21 տոկոս աճ, իսկ «Միկաբետոնը» 7,5 մլրդ դրամի, արձանագրելով 10 տոկոս աճ: Ըստ հանքարդյունաբերության վարչության պետի, այս երկու ընկերությունների հզորությունները միասին կազմում են 2 մլն 400 հազար տոննա: Նոսրմ բավարարում են ոչ միայն մեր երկրի ներքին շուկան, այլեւ Վրաստանի շուկայի 30-40 տոկոսը: Եթե տրանսպորտային հարցը լուծվի, ապա, Նախարարության վարչության պետի կարծիքով, հայկական գեմեցը հնարավոր կլինի արտահանել մեծ ծավալներով:

Ա. Ս.

Հայրենաշարժ

«Եթե Կոսովոյի անկախությունը նպաստի ԼՂՀ անկախության ճանաչմանը, մենք ուրախ կլինենք»

Երեկ ԼՂՀ Նախագահ **Բակո Սահակյանը** «Երեան» հյուրանոցում հանդիպում ունեցավ ԵԱՀԿ գործող նախագահ, Ֆինլանդիայի արտգործնախարար **Իլկա Կաներվայի** հետ: Իլկա Կաներվան նշեց, որ կարեւորություն է տալիս իր հայասան, Ադրբեջան այցի նոյակներին, հանդիպումներ է ունեցել երկու երկրների ներկայացուցիչների հետ եւ խոսել ղարաբաղյան հակամարտության խնդիրների լուծման տարբերակներից եւ հանգել որոշակի լուծումների: Բացի այդ, Իլկա Կաներվան ասաց, որ հանդիպել է ՀՀ նախագահի, արտգործնախարարի հետ: Ըստ Կաներվայի, ԵԱՀԿ-ի շահերից է բխում նաեւ ամբողջ հարավկովկասյան տարածաշրջանում ժողովրդավարության հաստատման գործընթացը. «Գոյություն ունի ԵԱՀԿ Մինսկի խումբ, որն ունի հաղթական մեծ կշիռ ու դրա միջոցով հնարավոր է հասակ արդյունի հասնել: Իմ կարծիքով, ղարաբաղյան խնդրի կարգավորման համար կարեւոր է, որ երկու երկրների ղեկավարները հանդիպեն ու որեւէ որոշման հանգեն»:

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանն էլ իր հերթին նշեց, որ հանդիպումը եղել է ճանաչողական բնույթի, կողմերը փորձել են ընկալել գործնական հարցեր: «Մենք գործող նախագահի հետ խոսել ենք ներկայիս բանակցային գործընթացի մասին, փաստել ենք մեր հավատարմությունը, հարցին նայելով բացառապես խաղաղ կողմից, նշել ենք եւ խնդրել, որ գործող ԵԱՀԿ նախագահն օգտագործի իր հնարավորություններն ու լիազորությունները՝ վերանայելու բուդապեշյան գագաթաժողովի որոշումը, եւ ԼՂՀ-ն շարունակի մասնակցություն ունենալ բանակցային գործընթացին՝ որպես լիարժեք կողմ»: Կոսովոյի անկախացման նախադեպի մասին Բակո Սահակյանն ասաց, որ հետեւում են այդ գործընթացին, եւ ընդգծեց, որ եթե Կոսովոյի անկախությունը նպաստի ԼՂՀ-ի անկախության ճանաչմանը, ապա իրենք ուրախ կլինեն:

ԼՂՀ նախագահն անդրադառնալով հայասանյան ներքաղաքական խնդիրներին, մասնավորապես Տեր-Պետրոսյանի ձեռնարկած քայլերին, նշեց. «Հերթական հանրահավաքի ժամանակ Լեւոն Տեր-Պետրոսյանը որոշեց է ԼՂՀ նախագահին եւ ասել, որ որոշումն է այն հանգամանքը, որ ԼՂՀ նախագահն ու իշխանությունները չեն մասնակցում Հայասանում նախագահական ընտրություններին: Դա ճշմարտություն է, քանի որ ԼՂՀ քաղաքացիները, իշխանությունները չեն միջամտել ՀՀ նախագահական ընտրություններին: Այդ նույն ելույթի ժամանակ, Տեր-Պետրոսյանը նշել է, որ համեմատելով նախկին նախագահի հետ եւ ինքնադատելով նրան, նշել է, որ Արկադի Ղուկասյանը 2003-ին միջամտել է նախագահական ընտրություններին»:

ՆԵՍԻԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԵՂԱՍՏԱԿԱՆԵՐ

Գալուս Սահակյան. «Պետության վրա բարձրացված ձեռքն են բռնում»

ՀՀԿ փոխնախագահ Գալուս Սահակյանի գնահատականով՝ երաշխը անհասկանալիություն է, բայց վիճակը ո՛չ ծանր, ո՛չ էլ լարված է, քանի որ ՀՀԿ-ն իրեն սաստրողների հետ կարողացել է լավ ընտրություններ անցկացնել. «Մեկ բան չէիր կանխատեսել, չէիր մտածում, որ որեւէ քաղաքական ուժ կամ քաղաքական ուժեր կլինեն, որոնք, իհարկե, ոչ իմքնանոյատակ, կփորձեն վտանգել Հայաստանի անկախությանը կամ ամրապնդման պրոցեսները, որ, առավել եւս, կբահարկեն Ղարաբաղի խնդիրը»: Գալուս Սահակյանը «Հայելի» ակումբում Ազատության հրապարակում տեղի ունեցող հանրահավաքը գնահատեց օրինազանց, իսկ հարթակում գտնվողներին՝ հայրենադավ: Ազատության հրապարակը նրանց ներկայությունից ազատելու հնարն էլ լիազորված մարմինների անելիք դիտարկեց բանախոսը՝ ընդգծելով հրապարակում հավաքված ժողովրդի մոլորյալ ու անմեղ լինելը: Ինչ նրանց պատասխանության համար էլ ոստիկանությանը համախմբել են: «Կարծում եմ, հմուտ կլինեն մեր պետության լիազոր մարմիններն ու կհասնեն կարգ ու կանոն հաստատելու: Այնտեղ տարբեր պատճառներով մոլորյալ ժողովուրդ կա եւ շատերն այսօր արդեն ընդամենը խաչաղուրիներ, պիցցաներ ուտելու, օդի խմելու համար են գնում, վրանների տակ գտնվող մարդիկ էլ վճարվում են: Փաստորեն մենք չենք կարող մերկ քայլերով այդ խնդիրը լուծել, որովհետեւ այնտեղ է մոլորյալ, բայց անմեղ ժողովուրդ», սա ասելով բանախոսը լուծում դիտարկեց երեւանում ՀՀԿ թեկնածուին ձայն տված հասարակության վերջին՝ հաղթական միտինգը, որում մոլորյալների, ստիպվածների ներկայությունը համարյա բացառեց՝ համարելով, որ որեւէ քաղաքական ուժ անկարող է հարյուր հազարավոր անձանց մոլորեցնել կամ ստիպել:

Գալուս Սահակյանը հավաստած է, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն ամենեւին էլ ՀՀ նախագահ դառնալու խնդիր չի դրել իր առջեւ, այլ Հայաստանի թուլացումը կարետրող արտաքին ուժերի՝ գազի ու նավթի մագնատների կողմից ծառայեցվող դեսանց է, որը նաեւ Ղարաբաղի խնդիրը շուտափույթ եւ մեծ զիջումներով լուծելու խնդիր ունի: ՀՀԿ թեկնածու Սերժ Սարգսյանի հայտարարությունն էլ Ղարաբաղի խնդրի շուտ լուծման մասին հիշեցվեց Գալուս Սահակյանին, բայց դրանցում տարբերություններ տեսնելով, բանախոսն ընդգծեց, որ երկրի թալանի պրոֆեսորների թիմ է Լեւոն Տեր-Պետրոսյանի խումբը, որն արդեն իսկ օգտագործված դասադուլների, գործադուլների միջոցով փորձեց խարխլել երկիրը, բայց կարողացավ անցյալը չվերլուծած երիտասարդներին դուրս բերել միայն:

Իր իսկ բնութագրմամբ թալանի պրոֆեսորների կողմից 1995-ին լինելը Գալուս Սահակյանը բացատրեց երկիրը քաղաքացիական պատերազմից զերծ պահելու մղումով. «Ազատության հրապարակն այսօր ազատ չէ, եւ կարելի թե դառնում է հայրենադավության հրապարակ»: Ի վերջո բանախոսը հրավիրակն ու իշխանությունների գործելակերպն այս կետը բանաձեւեց. «Հրավիրակը ցավալի՝ եմ համարում, բայց այն ձեռը, որը բարձրանում է պետության վրա, օդում պետք է բռնել, ինչն էլ կատարվում է»:

ՆԵՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տիրոքեկային հեռանկարներ, այն էլ՝ մոտ ապագայում

ԼՂՀ կառավարության երեկվա նիստում հաստատվել է հիդրոքեկային վարկի տրամադրման կարգը: Այդ կապակցությամբ վարչապետ Արա Հարությունյանը երեկ հրավիրել էր մամուլի ասուլիս, որին մասնակցում էր նաեւ ԼՂՀ ներդրումային հիմնադրամի տնօրեն Կարեն Եսայանը: Հիդրոքեկային վարկի տրամադրման կարգի որոշ հարցերի մեկնաբանությամբ հանդես եկավ հիմնադրամի տնօրենը, որից հետո վարչապետը պատասխանեց լրագրողների հարցերին:

Վարչապետի խոսքով, վարկի տրամադրման կարգը ոչ մի այլ երկրի մոդելով չի կազմվել, հավանաբար ենք առնվել տեղական առանձնահատկություններ: Ընդ որում՝ շահառուների թվի սահմանափակում չի լինի, վարկ կարող է ստանալ ԼՂՀ հաղթաթղթի: Չկա նաեւ տարիքային որոշակի ցենզ. սկսած 18 տարեկանից ամեն ոք կարող է բնակարան կառուցելու, գնելու կամ բնակարանը նորոգելու համար վարկ ստանալ, միայն թե վարկի մարման ժամկետը չգերազանցի նրա թոշակային տարիքը: Վարկային գումարի առավելագույն չափը 25 միլիոն դրամ է՝ 20 տարվա ժամկետով, իսկ նորոգման համար կհատկացվի մինչեւ 3 միլիոն դրամ՝ 5 տարվա ժամկետով:

Վարկեր տրամադրելու հնարավորություն կտրվի Ստեփանակերտում գործող բոլոր բանկերին՝ «Արցախբանկին», հայաստանյան բանկերի մասնաճյուղերին, որոնց հետ առաջիկա շաբաթների ընթացքում կկազմվի համաձայնագիր: Վարկային տոկոսը չի կարող գերազանցել ընդհանուր գումարի տարեկան 12 տոկոսը, որի ուղիղ կեսը անհատույց մարելու է ներդրումային հիմնադրամը: Կգործի կանխավճարի համակարգը, ըստ գոտիների՝ 20 եւ 30 տոկոսների չափով: Հավանաբար հաղթաթղթերի վճարունակության նվազ հնարավորությունները, կանխավճարի մի մասը հոգուս վարկառուի կմարի հիմնադրամը՝ հետագայում վճարված գումարը անտոկոս վերադարձնելու պայմանով: Այդուհանդերձ, ֆինանսական կարգապահության հարցը խիստ կարեւորվելու է՝ կիրառվելով նաեւ համապատասխան պատիժ:

Ինչ մնում է վարկի պայմաններին, ապա դրանց թվում վարչապետը նշեց, որ առաջին գոտում հաղթաթղթի պետք է ունենա առնվազն 10 տարվա գրանցում, երկրորդ գոտում՝ 5 տարվա, իսկ բնակարանի նորոգման նպատակով վարկ ստանալու համար վարկառուն պետք է տվյալ բնակավայրում հաստատված լինի առնվազն վերջին երեք տարում:

Հիդրոքեկն իրականացվելու է ինչպես մայրաքաղաք Ստեփանակերտում, այնպես էլ երշկենտրոններում: Գյուղական բնակավայրերում, որտեղ բնակարանային խնդիրը նույնպես սուր է դրված, առայժմ կիրականացվեն պետական այլ ծրագրեր:

Արդեն իսկ հիմա Ստեփանակերտում սկսված է 4 բազմաբնակարան շենքերի կառուցումը, որոնց շինարարությունն ավարտելուց հետո բնակարանները կվաճառվեն վարկառուներին:

ԼՂՀ կառավարության պետբյուջեով 2006 եւ 2007 թվականներին հատկացվել էր համապատասխան գումար՝ հիդրոքեկային վարկեր տրամադրելու համար, սակայն ոչ մի տրամադրում գործնականում չի հատկացվել այդ նպատակով: Այս տարվա բյուջեով նախատեսված է մեկուկես միլիարդ դրամ, տարբ կրկնակի ավելի, քան նախորդ երկու տարիներին միասին: Եթե հիդրոքեկային վարկ վերցնել ցանկացողները շատ լինեն, էլի գումարներ կգտնվեն, հավատացրեց վարչապետը:

ԿԻՍԻ ՀԱՍԱՐԻԵՆՅԱՆ

Ստեփանակերտ

ԳՅՈՒՂԵՐ

Քաղաքաղաքական-ԳԱԼԱ փոխադարձ հայցով դատավարությունը շարունակվում է

Ինչպես «Ազգը» տեղեկացրել է, փետրվարի 7-ին ՀՀ վարչական դատարանը Գյումրու նստավայրում վերսկսել ու երկու նիստից հետո կասեցրել է Գյումրու հարկային տեսչության եւ «ՅԱՊ» ՍՊԸ-ի՝ ԳԱԼԱ հեռուստաընկերության սեփականատիրոջ փոխադարձ հայցով վարչական գործի վարույթը մինչեւ դատարանի որոշմամբ նշանակված հարկային ակտի դատաբժշկական փորձաքննության ավարտը: Փետրվարի 25-ին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը դատավոր Ա. Խաչատրյանի նախագահությամբ ձեռնամուխ եղավ ԳԱԼԱ-ին առնչվող մյուս՝ Գյումրու քաղաքաքարանի եւ «ՅԱՊ» ՍՊԸ-ի փոխադարձ հայցով քաղաքացիական գործի դատական վարույթին:

Հիշեցնենք, որ անցյալ տարվա վերջերին քաղաքաքարանը հանդես էր եկել իր՝ որպես սեփականատիրոջ իրավունքների խախտումը վերացնելու, ավելի ստույգ՝ քաղաքի հին հեռուստաաշտարակը ԳԱԼԱ-ի հեռարձակող սարքավորումներից ազատելու հայցադիմումներ: Դրանց մասնակցությունը սկսած գնահատական մասնագիտական դատարանը մերժել եւ վարույթ չէր ընդունել պատասխանող կողմի հակընդդեմ հայցը հարկադիր սեղմիտուս (ուրիշի գույքի սահմանափակ օգտագործում) սահմանելու մասին: Պատասխանող կողմը դիմել էր վերաքննիչ դատարան, որի որոշմամբ էլ հակընդդեմ հայցն ընդունվել է ընդհանուր իրավասության դատարանի վարույթ եւ ինքնին է հիմնական հայցի հետ մեկտեղ:

Երկուշաբթի սկսված դատական նիստում «ՅԱՊ» ՍՊԸ-ի շահերը ներկայացնող փաստաբան Կարեն Թումանյանը հանդես եկավ խնդրանակա հեռուստաաշտարակի եւ տարածքի դատատեխնիկական-շինարարական փորձաքննություն անցկացնելու միջնորդությամբ: Նպատակը հնարավոր հարկադիր սեղմիտուս սահմանելու հետ կապված մի շարք տեխնիկական խնդիրների մասնագիտական պարզաբանումն է: Միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու համար նիստն ընդմիջվեց մինչեւ հաջորդ օր: Ինչպես նիստից հետո նշեց փաստաբան Կարեն Թումանյանը, հեռուստաաշտարակը հասարակական նպատակային նշանակության օբյեկտ է եւ համայնքային սեփականություն, ուստի պետք է որ ծառայի հասարակության շահերին, նա տեղեկացվություն ստանալու իրավունքին:

Երեկ կեսօրին վերսկսված դատական նիստում նախագահող դատավորի հրապարակած որոշմամբ՝ հեռուստաաշտարակի դատատեխնիկական-շինարարական փորձաքննություն նշանակելու միջնորդությունը մերժվեց: «ՅԱՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հանդես եկավ նոր՝ հեռուստաաշտարակի եւ տարածքի զննություն անցկացնելու միջնորդությամբ, որը դատարանը որոշեց բավարարել, բայց դա կատարել առաջադրված հարցերի հետազոտման կարգը սահմանելուց հետո: Այդ հիմնական հայցվոր քաղաքաքարանի ներկայացուցիչը հանդես եկավ միջնորդությամբ՝ կատարել արագացված դատավարություն, իրենց հայցը բավարարել եւ հեռուստաաշտարակ ազատել տալ ԳԱԼԱ-ի հեռարձակող սարքավորումներից, հարկադիր սեղմիտուս սահմանելու վերաբերյալ հակընդդեմ հայցն էլ մերժել: Դատարանը մերժեց ինչպես այս, այնպես էլ դրան հաջորդած՝ հիմնական պատասխանող կողմի միջնորդությունը՝ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու համար գործի քննությունը հետաձգել:

Սահմանելով ապացույցների հետազոտման կարգը, դատարանն այնուհետեւ լսեց կողմերի ելույթները փոխադարձ հայցադիմումների վերաբերյալ: Եթե պարզ լեզվով կարճ ասենք՝ քաղաքաքարանի ներկայացուցչի պահանջն այն է, թե հեռուստաաշտարակը մեր սեփականությունն է, նա պետքինումը որոշելը՝ մեր իրավունքը, ուստի ձեր սարքավորումները մեր աշտարակից հանեք տարեք ուրիշ տեղ: «ՅԱՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչն էլ պնդում է, թե քանի որ այդ նույն տարածքում, քաղաքամասում այլ աշտարակ չկա՝ ուրեմն պետք է հասարակական պահանջմունքների բավարարման համար իրենց տրի համայնքային սեփականություն՝ աշտարակի սահմանափակ ծառայագործման իրավունք: ՍՊԸ-ի՝ ներկայացուցիչը նաեւ միջնորդեց՝ քաղաքաքարանից պահանջել՝ ներկայացնել աշտարակի սեփականության փաստաթղթերն ու դրանց ձեռք բերման հիմքերը, որոնց վերաբերյալ կասկածներ ունեն: Այս հարցում էլ սանձալով մերժում, ԳԱԼԱ-ի կողմի փաստաբանը դատավորի անկողմնակալությանը կասկածելու հիմքով ներկայացրեց նոր ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդություն, որը եւս մերժվեց:

Երեկվա դատական նիստն ավարտվեց կողմերի հայցադիմումներին կից ներկայացված փաստաթղթերի հրապարակմամբ: Ինչպես հայտարարվեց, այսօր կկատարվի դատարանի որոշմամբ նախատեսված՝ հեռուստաաշտարակի եւ տարածքի զննությունը: Իսկ դատական նիստը կշարունակվի վաղը:

ԳԵՂԱՄ ՄԱՐՏՈՅԱՆ

Հայկական դավադրության որոնումներ Ադրբեջանում

Դրանք հանգեցնում են «Խոջալուի կոտորածներով» Հայոց ցեղասպանությունը հակակշռելու փորձերին

Հայ սպանելու համար Ռամիլ Սաֆարով կոչված մարդասպան-սահակին Ադրբեջանում «տավա մադ» ընտրելիս, նաեւ ազգային հերոս հռչակող ադրբեջանական հոսակը ոչ մի կերպ չի կարողանում ձերազատվել հայկական դավադրության որոնումներից: Դրանք մերթ հանգեցնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում PKK-ի այսպես կոչված ճամբարների հայտնաբերմանը, մերթ Խոջալուի հենակետերի լռեցումը վերածվում է ադրբեջանցիների նկատմամբ հայերի իրագործած «ցեղասպանության»:

Հայկական դավադրության որոնումներում թեմալական ազգայնականները ջանասիրությամբ աջակցում են ադրբեջանական հոսակին եւ ջանք չեն խնայում, որ միջազգային հնչեղություն հնչցրեն դրանց: Հնչեղության առիթով չափազանց հասկանալի կլիներ հայի ազգանունով Հայաստանում թուրք-ադրբեջանական քարոզչություն ծավալող հայայաց տակնուներն արձագանքը, որքան Իլիայի խոսափողը դաշնալու մոլուցքով հայտնվել են այս քարոզչությունը Հեյդար Ալիեւի գովերգությամբ համադրելու հարկադրանքի տակ: Գարեգին Նժդեհն իզուր չի ասել. «Ամեն ազգ իր տականքն ունի, հայի տականքը նմանը չունի»:

Համենայն դեպս, նախորդ համարներում «Ազգն» անդրադարձել էր Լեռնային Ղարաբաղում իբր տեղակայված PKK-ի ճամբարների շուրջ ադրբեջանցիների աղաղակին, տեղեկացնելով միաժամանակ Հագայում «Խոջալուի զոհերի» հուշարձան կանգնեցնելու գաղափարի մասին: Ադրբեջանական նախաձեռնության շրջանակներում ոչ միայն կասավել է վերոհիշյալ հուշարձանի բացումը, այլեւ «Խոջալուի կոտորածները» թեմայով միջոցառումներ են կազմակերպվել Բեռլինում եւ Նյու Յորքում, ինչպես նաեւ «կոտորածները» դատապարտող ցույց Սամբուլում: Ընդ որում, բոլոր միջոցառումներում Խոջալուի կոտորածների եւ Հայոց ցեղասպանության միջեւ հավասարության նշան դնելու փորձ է արվել:

«Խոջալուի զոհերի» հուշարձանը, ինչպես նշում է «Հուրիեթը», Հոլանդիայի «Թուրք-ադրբեջանական մշակույթ» հիմնադրամի նախաձեռնությամբ փետրվարի 24-ին բացվել է Նիդերլանդների Թագավորության կառավարության մասավոր Հագայի Դեն Հաագ գերեզմանոցում: Բացման արարողությանը մասնակցել են Նիդերլանդներում Ադրբեջանի դեսպան Իսմանյարովը, ինչպես նաեւ Թուրքիայի դեսպանատան խորհրդականն ու Ռոտերդամում Ճույմ երկրի հյուպատոս Ալթուը, Բելգիայում Ադրբեջանի դեսպանության առաջին քարտուղար Կաբեթովը, Աշժիրի դեսպանատան մշակույթի կցորդ Մոուսան, թուրքական հասարակական եւ կրոնական երկու կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ելույթում Ադրբեջանի դեսպանը եւ վերոհիշյալ հիմնադրամի նախագահն ասել են, որ «սա դեռ սկիզբն է, առաջիկայում նոր հուշարձաններ են կանգնեցնելու աշխարհի տարբեր երկրներում, նվիրված Խոջալուի զոհերին»:

Նույն օրը Բեռլինում Իգդիրի քաղաքաբեռարանի նախաձեռնությամբ, «Խոջալուն եւ ճշմարտությունը 1915-ի իրադարձություններում» թեմայով կազմակերպած միջոցառմանը, թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, մասնակցել են Թուրքական դատական ընկերության նախագահ Մրդ. Յուսուֆ Հալաչօղլուն, թուրք եւ ադրբեջանցի դատաբանների հետ, որոնք մասնացույց անելով «Խոջալուի» կոտորածները, հանիրավի են համարել 1915-ի իրադարձությունների առնչությամբ Թուրքիայի Ցեղասպանության մեջ մեղադրելու տարբեր խորհրդարանների ձեռնարկումները:

Նյու Յորքի միջոցառումը հաստատ ջանքերով կազմակերպել են Թուրք-ամերիկյան միությունների ֆեդերացիան, Ամերիկայի ադրբեջանական միությունը, Ադրբեջանի ամերիկյան խորհուրդը: Փետրվարի 25-ին, նշելով այդ մասին, «Թերջումանը» գրում է, որ «այսպես կոչված Ցեղասպանության հայկական կեղծիքը Խոջալուի կոտորածներով արժանի դատապարտման է ստացել ԱՄՆ-ում», առա եւ ավելացնում. «1992-ին Խոջալուում հայերն սպանել են 613 մարդ, այդ թվում 106 կին եւ 83 երեխա»: Նյու Յորքում Թուրքիայի հյուպատոսարանի շենքում հրավիրված միջոցառման մասնակիցներն ընդգծել են Խոջալուի կոտորածների առումով աշխարհին իրազեկելու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է Սամբուլի Թաքսիմ հրապարակի ցույցին, կազմակերպված «Ադրբեջանցիների համերաշխության» միության նախաձեռնությամբ, առա ցուցարարները կրել են «Խոջալուի կոտորածը Ցեղասպանություն է», «Ղարաբաղը դատկանում է Ադրբեջանին» մակագրությամբ ցուցատասառներ: Ցուցարարների թվում են եղել Սամբուլում Ադրբեջանի հյուպատոս Սալախլին, Միլի Մեջլիսի դատգամավոր Փաշաեան, որոնք էլ ելույթներում ասել են. «Հայաստանը Ցեղասպանության մեջ է մեղադրում Թուրքիային, մինչդեռ իրենք են կատարել այդ ոճագործությունը: Աշխարհը դեռեւ է ճանաչի Խոջալուում հայերի իրագործած Ցեղասպանությունը»:

«Ազատի» տվյալներով, ցույցին մասնակցել է 1000 մարդ: Թե որքան է եղել մյուս միջոցառումներին մասնակցողների թիվը, թուրքական թերթերը կամ հեռուստատեսությունը նոյատակահարմար չեն գտնում նշել: Այսինքն, արձագանքներն անբավարար են:

ՎԱՀԱՆ ՉԱԼԱԲՅԱՆ

Վերջին 50 տարում աշխարհում մահացու հիվանդությունների թիվը քառապատկվել է

Կոլումբիա համալսարանի ամերիկյան CIESIN միջազգային գիտահետազոտական կենտրոնի անցկացրած հետազոտությունից դարձել է, որ վերջին 50 տարում աշխարհում մահաբեր հիվանդությունների թիվը քառապատկվել է, ըստ որում վիրուսների 60 տոկոսը մարդկանց է փոխանցվել կենդանիներից:

1940-2004 թթ. ի հայտ եկած 335 հիվանդությունների վերլուծության արդյունքները համադրվել են մոլորակի բնակչության խտության եւ վայրի բնության կենսափոփոխականության հետ, նշում է «Գազետա.ռու» կայքէջը:

Հատկանշական է, որ եթե հեռաձգաց երկրներում փորձագետներն ամենալուրջ սպառնալիքը համարում են նոր վարակները, ապա զարգացած երկրներում առավել մեծ վտանգ են ներկայացնում հակաբիոտիկների նկատմամբ կայուն ախտածին վիրուսները եւ բիմիապես ձեւափոխված սննդամթերքներից առաջացած նոր հիվանդությունները:

Դրանք վարակներն առաջարկեն տեղափոխվում են նոր շրջաններ եւ առաջ բերում համաճարակներ: Ենթադրաբար մարդու եւ բիմոյանգեի շփումից ծագած ԴԱՎ-ի համաճարակն ախտահարել է 65 մլն մարդու: Իսկ վերջերս լինական խոշոր թռչունների տարածած անսովոր թոքաբորբի օջախների վերացման վրա աշխարհի առողջապահական ծառայությունները 100 մլրդ դոլար են ծախսել:

Համաճարակների «թեժ կետեր» են համարվում Սահարայի շրջանի երկրները, Հնդկաստանը եւ Չինաստանը: Վտանգավոր հիվանդությունները նվազ չափով են զարգանում Եվրոպայում եւ Հարավային Ամերիկայում:

ՌԴ ԲԳԱ թղթակից անդամ Բորիս Բոգոմոլովի կարծիքով, այս տարի միայն Մոսկվայի մարզի վայրի բնության մեջ առկա է այնպիսի ծանր հիվանդությունների տարածման վտանգ, ինչպիսիք են երիկամային համախտանիշով թութքային տենդը, Լայմի հիվանդությունը, լեպտոսպիրոզը, կատաղախտը:

Ռուսաստանի վայրի բնության մեջ արձանագրվել են նաեւ ժանտախտի եւ տիզային ուղեղաբորբի օջախներ:

Փորձագետները նշում են, որ մահացու հիվանդությունների վտանգի աճը կապված է նախ եւ առաջ բնակչության խտության աճի եւ մանրէներից մարդու օրգանիզմի պատեպանության անկատար մեթոդիկայի հետ: Անհրաժեշտ է անհետաձգելիորեն ձեւակել բուժման եւ ախտականխման նոր եղանակներ, այլապես ախտածին վիրուսները կդառնան անվերահսկելի:

Պարեսային ժամ Օկինավայի ամերիկացիների համար

Ճապոնիայի Օկինավա կղզու ամերիկյան ռազմակայանի հրամանատարությունը պարեսային ժամ է սահմանել այնտեղ ապրող բոլոր ամերիկացիների եւ նրանց ընտանիքների անդամների համար: Ֆրանսիրեսը հաղորդում է, որ մարտի 26-ից սահմանված պարեսային ժամը կգործի առնվազն մինչեւ մարտի 3-ը:

Այդ օրը ճապոնացի դատախազները պետք է որոշեն, թե մեղավո՞ր է արդյոք ամերիկյան բանակի 38-ամյա սերժանտ Թայլեր Կլուբեր Հեդոնը, որին կասկածում են տեղացի 14-ամյա մի աղջկան բռնաբարության մեջ: Սերժանտն արդեն մասնակիորեն խոստովանել է իր մեղքը, նշում է Ֆրանսիրեսը:

Առաջին անգամ չէ, որ Օկինավայում ծառայող ամերիկացիները մեղադրվում են իրական հանցանքի մեջ: 1995-ին մի քանի զինծառայողներ բռնաբարեցին 12-ամյա մի ճապոնուհու: Այդ դեպքը կղզու բնակչության մեջ բողոքի զանգվածային ալիք առաջացրեց: Մարդիկ պահանջում էին փակել կղզու ամերիկյան ռազմակայանը կամ կրճատել զինծառայողների թիվը:

Ներկայումս Օկինավայում ծառայում են մոտ 20 հազար ամերիկացիներ:

Կոսովոն եվրատլանտյան կառույցներում ներգրավելու ծրագիր ԱՄՆ-ում

Ամերիկյան Սենատին երեկ ներկայացված բանաձեւը հավանություն է տալիս ՆԱՏՕ-ին Ալբանիայի, Խորվաթիայի եւ Մակեդոնիայի անդամակցությանը, ինչպես նաեւ եվրատլանտյան կառույցներին նորանկախ Կոսովոյի ինտեգրմանը: Այդ մասին ՌԻԱ գործակալության թղթակցին հայտնել են Սենատի քարտուղարությունում:

ԱՄՆ-ը ինքնահռչակ Կոսովոյի անկախությունը ճանաչել էր փետրվարի 19-ին: Դրանից հետո Սերբիան Վաշինգտոնից հետ էր կանչել իր դեսպանին:

Սենատի արտաքին գործերի հանձնախմբին ներկայացված բանաձեւում մասնավորապես նշվում է. «ԱՄՆ-ը պետք է առաջատար լինի եւ Բուխարեստում 2008-ի ապրիլին կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովում պատասխանի Ալբանիայի, Խորվաթիայի եւ Մակեդոնիայի անդամակցությունն այդ դաշինքին»:

Փաստաթղթում ընդգծվում է. «ՆԱՏՕ-ն Հարավսլավիայի դեմ ռազմական գործողություններ իրականացրեց Կոսովոյում երկարաժամկետ խաղաղության հասնելու նպատակով»: Ապա նշվում է. «ԱՄՆ-ը դիվանագիտորեն ճանաչել է Կոսովոյի անկախությունը եւ պետք է նպաստի միջազգային եւ եվրատլանտյան կառույցներում Կոսովոյի ինտեգրմանը»:

Ըստ բանաձեւի, «Սենատը հավանություն է տալիս ՆԱՏՕ-ի ընդլայնման ջատագովությանը»: Նաեւ ընդգծվում է, որ «իրենց եզակի աշխարհագրական դիրքի շնորհիվ Ալբանիան, Խորվաթիան եւ Մակեդոնիան կարող են Հարավարեւելյան Եվրոպայում կարեւոր դեր խաղալ ՆԱՏՕ-ի գործողություններում, զարգացնելով բոնի ուժով տարանջատումն ապակայունացնելու բոլոր փորձերը»:

Մերբիա-Ռուսաստան. տնտեսական զիջումներ հովանավորության դիմաց

ՌԴ առաջին փոխվարչապետ Դմիտրի Մեդվեդեւի Սերբիա կատարած պաշտոնական այցի կապակցությամբ եվրոպական մամուլն արձանագրում է, որ Կոսովոյի հարցում Սերբիային աջակցող Մոսկվայի դիրքորոշումը փաստորեն մնում է անփոփոխ: Սերբիան տնտեսական մի շարք զիջումներով «գնել է» Ռուսաստանի հովանավորությունը, նշում են վերլուծաբանները:

Նախագահության գլխավոր թեկնածու Մեդվեդեւի օտարերկրյա առաջին ինքնուրույն այցի առթիվ ամերիկյան «Ռուլ սթրիթ ջոռնալ» թերթը գրում է, որ Ռուսաստանն ու Սերբիան պատրաստվում են համատեղ ուժերով հակահարված տալ անկախանալու փորձ արած Կոսովոյին: Մեդվեդեւը Բելգրադում դատապարտեց սերբական երկրամասի «անօրինական» անջատումը: Սա ենթադրել է տալիս, որ նա հակված է շարունակելու Պուտինի քաղաքական գիծը:

Այցի գլխավոր իրադարձությունը «Գազպրոմի» եւ Սերբիայի համաձայնագիր ստորագրումն է «Հարավային հոսք» գազամուղի սերբական հատվածի կառուցման եւ շահագործման վերաբերյալ: Դրանով ռուսական եւ միջինասիական գազը կհասցվի եվրոմիություն: Դա ամրապնդում է Մոսկվայի դիրքերը, մինչդեռ արեւմտյան քաղաքական գործիչների դիրքերը Կոսովոյի անջատումից հետո թուլանում են:

Մոսկվայի քաղաքական աջակցության դիմաց դեռ ստանալիք Սերբիան նաեւ համաձայնել էր «Գազպրոմին» վաճառել երկրի նավթային ընկերությունը:

Դատապարտվում է «աֆրիկացի» Օբամայի լուսանկարների տարածումը

Նախագահության դեմոկրատ թեկնածու, ծագումով աֆրոամերիկացի Բարաք Օբամայի նախընտրական շտաբի կառավարիչ Դեւիդ Փլուֆը Օբամայի կոնակից եւ մրցակից Հիլարի Քլինթոնի շտաբի աշխատակիցներին մեղադրել է այն լուսանկարների տարածման համար, որոնցում Օբաման աֆրիկյան հագուստ է կրում:

Այդ լուսանկարները առաջին անգամ հայտնվել էին փետրվարի 25-ին ամերիկյան «Դրաջրիփորտ» կայքէջում: Մակագրության մեջ նշվում էր, որ դրանք ստացվել են Հիլարի Քլինթոնի շտաբի աշխատակիցներից:

Վերջիններս չեն փնտրում, որ լուսանկարները են ուղարկել, բայց հրաժարվում են մեկնաբանել այդ կապակցությամբ ստեղծված իրավիճակը: «Պոլիտիկո» կայքէջը հաղորդում է, որ սենատոր Օբամայի աֆրիկյան ծագումը շեշտող լուսանկարները արված են 2006-ին Քենիայում՝ նրա աֆրիկյան շրջագայության օրերին:

Դեւիդ Փլուֆի հայտարարության մեջ ասվում է. «Հենց այն օրը, երբ սենատոր Քլինթոնը ճառ է ասում ողջ աշխարհում Ամերիկայի նկատմամբ հարգանքը վերականգնելու մասին, նրա շտաբի աշխատակիցները կազմակերպում են ներկա ընտրարշավում երկու կուսակցությունների թույլ տված ամենամիամտական քայլը»:

Միջակա ընտրություններում 11 անընդմեջ հաղթանակ տարած Օբաման առաջ է անցել Քլինթոնից, որը վերջերս նրան ամբասանում էր «դատապարտության» մեջ:

Դավթյանն ու Նազարյանը երրորդ մրցանակակիրներ

Համբուրգում անցկացված ձյուդոյի Եվրոպայի Սուպերգավաթի խաղարկությունում հաջող հանդես եկան հայ ձյուդոիստներ Հովհաննես Դավթյանն (60 կգ) ու Արմեն Նազարյանը (66 կգ)՝ զբաղեցնելով մրցանակային 3-րդ տեղը:

Առաջին գոտեմարտում Դավթյանը բացարձակ առավելության հասավ բրազիլացի Ալեխանդրե Լեեի նկատմամբ (16-0), այնուհետև պայքարից դուրս մղեց դազախստանցի Բազարբեկ Դոնբաեւին ու ֆրանսիացի Տերոմե Գուլոտին: Քառորդ եզրափակիչ գոտեմարտում էլ ռուսաստանցի Եվգենի Սանեեւի նկատմամբ հայ ձյուդոիստի առավելությունը նկատելի էր: Տավոք, եզրափակիչի ճանապարհը նա դիմց փակեց ճապոնացի Տադահիրո Նոմուրան, որն ի վերջո զբաղեցրեց 2-րդ տեղը՝ վճռորոշ գոտեմարտում զիջելով ավստրիացի Լյուդվիգ Պայշերին: Իսկ Հովհաննես Դավթյանը բրոնզե մեդալի համար մրցավեճում հաղթեց թուրք Քեմալ Օգուզին ու դարձավ երրորդ մրցանակակիր:

Քաջային այս կարգում Հայաստանը ներկայացնող մյուս ձյուդոիստը՝ Արթուր Սրափյանը առաջին գոտեմարտում պարտվեց առյագա չեմպիոնին՝ Լյուդվիգ Պայշերին, այնուհետև զիջեց ավեյցարացի Լյուդվիկ Ցամարտինին ու դուրս մնաց պայքարից:

Ձախից երրորդը բրոնզե մրցանակակիր Արմեն Նազարյանն է

Արմեն Նազարյանը մինչեւ 66 կգ քաշային կարգում հաղթարշավը սկսեց ավստրիացի Իվո դոս Սանտոսի նկատմամբ տարած հաղթանակով, այնուհետեւ առավելության հասավ գերմանացի Ռենե Շնայդերի, լեհ Պավել Ջագրոդնիկի նկատմամբ: Քառորդ եզրափակիչում հայ ձյուդոիստը զիջեց ռուսինացի Գեորգե Ֆասիեին: Բրոնզե մեդալի համար մրցավեճում Նազարյանն իրեն լավ դրսեւորեց: Հաջորդաբար հաղթելով Լի Վանգին, Դավիթ Դուբսկուն ու Արտիան Կուլիշին, Նազարյանն արժանացավ բրոնզե պարգեւի: Իսկ հաղթող ճանաչվեց իսպանացի Օսկար Պենասը, որը եզրափակիչում առավելության հասավ հունգարացի Միկլոշ Ունգվարիի նկատմամբ:

Քաջային այս կարգում հանդես եկած Համբարձում Տոնոյանը, ինչպես նաեւ Ռոբերտ Վարդանյանը (73 կգ) պայքարից դուրս մնացին նախնական փուլերում:

Մարկո վան Բաստենը կմարզի Էդգար Մանուշարյանին

Ցնծալելով ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ավարտին, Հոլանդիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Մարկո վան Բաստենն արդեն որոշել է իր հետագա ճակատագիրը: Հուլիսի 1-ին, երբ կլրանա նրա պայմանագրի ժամկետը Հոլանդիայի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ, Մարկո վան Բաստենը կվերադառնա հարազատ «Այաքս», որտեղ է ժամանակին ձեւավորվել է նրա ֆուտբոլային տաղանդը: Այնպես որ «Այաքսում» հանդես եկող Էդգար Մանուշարյանը տուսով նոր մարզիչ կունենա:

Մարկո վան Բաստենը ֆուտբոլային հիանալի կենսագրություն ունի: Նա երեսական անգամ նվաճել է Հոլանդիայի եւ Իտալիայի չեմպիոնների գավաթները, «Այաքսի» կազմում երեք անգամ էլ դարձել է Հոլանդիայի գավաթակիր: Իտալական «Միլանում» Մարկո վան Բաստենը երկու անգամ նվաճել է չեմպիոնների գավաթը: Ֆուտբոլիստի կարիերան Բաստենն ավարտել է 1995-ին՝ հրաժարվելով երկարաձգել պայմանագրի ժամկետը «Միլանի» հետ: Այդ ժամանակ նա հայտարարել էր, որ չի պատրաստվում մնալ ֆուտբոլում եւ զբաղվել մարզական գործունեությամբ: Նա իր խոստմանը հավատարիմ մնաց գրեթե ութ տարի: 2003-ին Բաստենը համաձայնվեց դառնալ իր նախկին թիմակից Ցոն վան Սիխիի օգնականը, որը գլխավորում էր «Այաքսի» երիտասարդական թիմը:

Մեկ տարի անց՝ հուլիսի 29-ին Հոլանդիայի ֆուտբոլի ֆեդերացիան Մարկո վան Բաստենին առաջարկեց գլխավորել երկրի ազգային հավաքականը: Նրա հետ չորս տարվա պայմանագիր կնքվեց: Բաստենը Սիխիին հրավիրեց որպես օգնական: Հավաքականում նոր գլխավոր մարզչի առաջին քայլերը սփոթեցին շատերին թերահավատորեն վերաբերվել ֆեդերացիայի ընտրության իրավացիությանը: Այն ժամանակ շատերին տարօրինակ էին թվում նորանշանակ մարզչի ձեռնարկումները: Վերջինս կարճ ժամանակում հրաժարվեց ֆուտբոլային «աստղեր» Կլարենս Զեեդորֆի, Պատրիկ Կլույվերտի, Էդգար Դավիդսի եւ Ռոյ Մաաթի ծառայություններից՝ հայտարարելով, որ իր կարծիքով նրանց ժամանակն արդեն անցել է: Բայց դրանով հավաքականում կատարված փոփոխությունները չավարտվեցին: Առաջին անգամ նրա գլխավորած թիմում ընդգրկված չէին երկրի առաջատար ակումբների՝ «Այաքսի», «Էյնդհովենի», «Ֆեյենորդի» ֆուտբոլիստները: Այս ամենի գագաթնակետը երկրի լավագույն ֆուտբոլիստներից մեկի՝ Ռոնդ վան Նիստելրոյի հետ վան Բաստենի կոնֆլիկտն էր աչխարհի առաջնությունում պորտուգալացիներից կրած պարտությունից հետո: Սակայն մինչ այդ Մարկո վան Բաստենի գլխավորությամբ հավաքականը հիանալի էր հանդես եկել աչխարհի առաջնության ընտրական մրցաշարում՝ չկրելով ոչ մի պարտություն: Բացի այդ էլ, հավաքականի ցուցադրած խաղը երկրպագուների եւ մասնագետների ուշադրությանն էր արժանացել: Նույնպիսի հաջողությամբ Հոլանդիայի հավաքականը հաղթահարեց նաեւ եվրոպայի առաջնության ընտրական մրցափուլի արգելը:

Այս ամենը չէին կարող վրիպել Հոլանդիայի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարության ուշադրությունից, ուստի գլխավոր մարզչի հետ արդեն սկսվել էին բանակցությունները ետ երկու տարով պայմանագրի ժամկետը երկարաձգելու շուրջը: Սակայն վան Բաստենը նախընտրեց վերադառնալ «Այաքս»: Դրանում իր դերը խաղաց նաեւ Յոհան Կրույֆը՝ որն առաջարկել էր գլխավորել հարազատ կոլեկտիվը:

«Մենք շատ ուրախ ենք: Նա շատ սկզբունքային մասնագետ է, որը ժամանակին հաջողությամբ հանդես է եկել «Այաքսում» ու թիմին միջազգային ճանաչման է արժանացրել: Լավ է, որ նախապես ընտրությունը կատարելիքի մարզչի հարցում, որը թիմին կնախապատրաստի նոր մրցաշրջանին», հայտարարել է «Այաքսի» տեխնիկական տնօրեն Մարտին վան Գելը: Վան Բաստենին մարզական աչխատանքում կօգնեն Ռոբ Վիսչերն եւ Ցոն վան Սիխիը:

Ինչ վերաբերում է էդգար Մանուշարյանին, ապա նա հերթական վնասվածքից հետո նոր է սկսել հանդես գալ «Այաքսի» երիտասարդական թիմի կազմում: «Ֆուտբոլ 365» շաբաթաթերթին տված հարցազրույցում էդգար Մանուշարյանը նշել է, որ թիմի ներկայիս մարզիչ Ադրի Կոստերն իրեն չի տեսնում հիմնական կազմում: Նա հույս է հայտնել, որ նոր գլխավոր մարզիչ Մարկո վան Բաստենի օրոք իրեն բախտ կվիճակվի վերջապես ընդգրկվել «Այաքսի» հիմնական կազմում, որի համար անհրաժեշտ է բռնաշան մարզվել ու զերծ մնալ վնասվածքներից:

Խուանդե Ռամոսի նոր նվաճումը

Անգլիական «Ցելսիի» նոր գլխավոր մարզիչ Ավրամ Գրանտին չհաջողվեց իր առաջին տիտղոսը նվաճել: Անգլիայի լիգայի գավաթի եզրափակիչում «Ցելսին» լրացուցիչ ժամանակում զիջեց «Տոտենհեմին» (1-2): Այդ խաղում առաջինը հաջողության էր հասել «Ցելսին»՝ 39-րդ րոպեին Դրոգբայի գրի ընտրիով բացելով հաշիվը: Սակայն 70-րդ րոպեին Բերբատովը վերականգնեց հավասարակշռությունը, իսկ լրացուցիչ ժամանակում Վոտդեթը հաղթական պարգեւեց «Տոտենհեմին»:

Հերթական անգամ դրսեւորվեց Խուանդե Ռամոսի մարզչական տաղանդը: Իսպանացի մասնագետը գլխավորելով «Տոտենհեմը», ոչ միայն զգալիորեն բարելավեց թիմի մրցաշարային գործերը, այլեւ 1999-ից հետո առաջին տիտղոսը պարգեւեց: Հետաքրքրական է, որ նրա գլխավորած թիմերը մեծելով գավաթների եզրափակիչ, գրեթե մեկ անգամ նվաճել են պատվավոր մրցանակը: Հիշեցնենք, որ մինչ այդ Ռամոսի գլխավորությամբ իսպանական «Սեվիլիան» երկու անգամ անընդմեջ նվաճել է ՈՒԵՖԱ-ի գավաթը, ինչպես նաեւ դարձել է եվրոպայի սուպերգավաթակիր ու Իսպանիայի գավաթակիր:

«Միկան» կդայֆարի եզրափակիչի ուղեգրի համար

Աշտարակի «Միկան» հաջող է հանդես գալիս Ազգաբադում անցկացվող Թուրմենստանի «Նախագահի գավաթի» մրցաշարում: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, «Ա» խմբի առաջին խաղը «Միկան» ոչոքի (0-0) էր ավարտել Թուրքիայի սիրողական թիմերի խաղացողներից կազմավորված հավաքականի հետ: Վերջինս իր հերթին 1-0 հաշվով հաղթել էր Թուրմենստանի գավաթակիր «Շագադամին»: Այնպես որ, վերջինիս հետ խաղում «Միկային» առաջին տեղը գրավելու համար անհրաժեշտ էր հաղթել 2 գնդակի տարբերությամբ: Հուրախություն թիմի երկրպագուների, Արկադի Անդրեասյանի սաները կատարեցին իրենց առջեւ դրված առաջադրանքը: Արդեն 9-րդ րոպեին Նարեկ Բեգլարյանի խփած գոլի շնորհիվ «Միկան» բացեց հաշիվը: Իսկ 77-րդ րոպեին Արայիկ Ադամյանը 2-րդ գոլը խփեց: Հաղթելով 2-0 հաշվով, «Միկան» դարձավ «Ա» խմբի հաղթող:

Այսպիսով, «Միկան» իրավունք ստացավ շարունակել պայքարը կիսաեզրափակիչում: Այսօր հայ ֆուտբոլիստները եզրափակիչի ուղեգիրը կվիճարկեն Թուրքմենստանի փոխչեմպիոն ՄՏՏՈ-ի հետ մրցավեճում, որը դարձել էր «Բ» խմբի հաղթող: Այդ խաղի հաղթողն իրավունք կստանա փետրվարի 29-ին եզրափակիչում գլխավոր մրցանակը վիճարկել Թուրքմենստանի չեմպիոն «Ազգաբադի» հետ: Իսկ պարտվողը նույն օրը կվիճարկի 3-րդ տեղը:

Մեդրակ Մաթեւոսյանը՝ Շիրակի մարզի չեմպիոն

Գյումրիում ավարտվեց Շիրակի մարզի շախմատի տղամարդկանց 2008-ի առաջնության եզրափակիչ մրցաշարը, որին մասնակցում էին 11 պատանիներ ու երիտասարդներ եւ 1 աղջիկ: 11 հնարավորից վաստակելով 9 միավոր, եզրափակիչի հաղթող դարձավ եւ մարզի չեմպիոնի կոչումը նվաճեց Գյումրու շախմատի մարզադպրոցի մարզիչ, 28-ամյա Մեդրակ Մաթեւոսյանը: Նրա գործընկեր Արտուշ Քոչարյանը 8,5 միավորով երկրորդն էր, դրդրոցական Գառնիկ Բաղդասարյանը՝ 8 միավորով երրորդը: Այս տարվա առաջնությանը չէր մասնակցում Գյումրու նախորդ երկու տարիների չեմպիոն, պատանի Դավիթ Քալաջյանը, որը, ինչպես հայտնի է, հանդես էր գալիս վերջերս Մոսկվայում ավարտված «Սերոֆլոտ» շախմատային փառատոնի B մրցաշարում եւ դարձավ երկրորդ մրցանակակիր:

Ինչպես տեղեկացրեց մրցումների գլխավոր մրցավար Վալոդյա Մնացականյանը, արդեն երկրորդ տարին Գյումրուն միջազգային առաջնության փոխարեն անցկացվում է մարզային արտաքնություն: Ներկա մրցաշրջանում ծավալված լարված մրցակցության մասին է խոսում թեկուզ այն փաստը, որ ոչ միայն մրցանակային, այլ նաեւ հաջորդ մի քանի տեղեր գրաված մարզիկների արդյունքների տարբերությունը հաջորդաբար կես-սական միավոր է: Իսկ հաղթողի հարցը որոշվեց միայն վերջին տուրում:

Եզրափակիչի 12 մասնակիցներից 6-ը շախմատի մարզադպրոցի սաներ են՝ աճի լավ հեռանկարով:

Գ. Մ.

Բոնցհամարտիկներն անհաջող մեկնարկեցին

Հայ բոնցհամարտիկներն անհաջող մեկնարկեցին Իտալիայում անցկացվող բոնցհամարտի միջազգային մրցաշարում, որտեղ խաղարկվում են նաեւ Պեկինի օլիմպիադայի ուղեգրեր: Մրցումների առաջին օրը ռինգ մտած մեր երեք բոնցհամարտիկներն էլ անհաջողության մատնվեցին: Մինչեւ 54 կգ քաշային կարգում Արթուր Գրիգորյանը 16-18 հաշվով պարտվեց հայաստի Պարինելիին: Ազատ Հովհաննիսյանն էլ (57 կգ) միավորներով զիջեց իռլանդացի Օլիվեր Ջոյցին (21-37): Անհաջող էր նաեւ Սամվել Մաթեւոսյանի ելույթը, որը միայն մեկ միավորի տարբերությամբ (11-12) պարտվեց չեխ Ստեպան Հովաթին:

Արագոնեսը կշարունակի աշխատանքը

Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիան լրատվամիջոցներին կոչ է արել դադարեցնել հավաքականի գլխավոր մարզիչ Լուիս Արագոնեսի մոտակա պատասխանատվության մասին հայտարարությունները, նշելով, որ նա է գլխավորելու ազգային թիմն Ավստրիայում եւ Շվեյցարիայում կայանալիք եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլում: «69-ամյա մասնագետը կշարունակի աշխատանքը մինչեւ եվրոպայի առաջնության ավարտը: Նա լավ գիտի, որ ֆուտբոլի ֆեդերացիան ամեն ինչում աջակցում է մարզչին: Ամեն ինչ կանենք, որպեսզի Իսպանիայի հավաքականը հաջողության հասնի», հայտարարել է երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Անխել Մարիա Վիլարը:

Իսպանական լրատվամիջոցները սկսել էին ենթարկել Արագոնեսի հրաժարականի հարցն այն բանից հետո, երբ գլխավոր մարզիչը դժգոհել էր ֆեդերացիայից: Նրան դուր չի գալիս, որ արդեն այժմվանից ամեն տեղ ենթարկվում է իր հետնորդի թեկնածությունը: Լրատվամիջոցներն էլ մարզչին ենթադրում են այն բանի համար, որ նա հավաքական չի հրավիրում ընթացիկ մրցաշրջանում «Ռեալում» հիանալի հանդես եկող Ռաուլին ու Գուտիին:

Ֆրանսիայի հավաքականի հետ վերջերս կայացած ընկերական մրցախաղից առաջ Արագոնեսը հայտարարել էր, թե երեւի ճիշտ կլինի, որ իրեն հեռացնեն պատասխանից: Նշենք, որ Լուիս Արագոնեսի գլխավորությամբ Իսպանիայի հավաքականը հաջողությամբ հաղթահարեց եվրոպայի առաջնության ընտրական փուլի արգելը: Վերջին անգամ իսպանացիները պարտվել են 2006-ի նոյեմբերին ռումինացիների հետ կայացած ընկերական մրցախաղում:

Իսպանիայի հավաքականի գլխավոր մարզչի պատասխանի հիմնական հաչակնորոշներն են Վիսենտե դել Բոսկեն եւ Անտոնիո Կամաչոն: Վերջինս հավաքականը գլխավորել է 1998-2002-ին: Ցդիմանալով ճնշմանը, Լուիս Արագոնեսն օրերս ցանկություն էր հայտնել Ռաուլին: Վերջինս գրեթե 1,5 տարի չի հրավիրվել ազգային հավաքական: Մարզիչն ու ֆուտբոլիստը ավելի քան 2 ժամ զրուցել են: Ռաուլը նշել է, որ թեեւ ուրախանում է հավաքականի հաջողություններով, սակայն իր համար ցավալի է կազմում չընդգրկվելը, մանավանդ, որ զգում է, որ կարող է օգնել թիմակիցներին եվրոպայի առաջնությունում: Արագոնեսը չի բացահայտել Ռաուլի հետ ունեցած զրույցի մանրամասները, նշելով միայն, որ Ռաուլը մնում է հավաքականի թեկնածուներից մեկը եւ ինքը նրա հետ ոչ մի հիմնախնդիր չունի:

Իրը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Արթուր Բաղդասարյան. «Մենք խաղաղական իրավիճակը խաղաղական մեթոդներով հանգուցալուծելու օգտին ենք հանդես գալիս»

«Քաղաքական գործիչներին ձերբակալելու, ցուցարարների ճնշաժամք ուժ կիրառելու դեմերը չեն կարող բերել Հայաստանում ներիաղաղական իրավիճակի լարվածության թուլացմանը, դեռ ավելին՝ խորացնելու են: Մենք հանդես ենք գալիս խաղաղական այս լարված իրավիճակը խաղաղական մեթոդներով հանգուցալուծելու օգտին», երեկ ՕԵԿ գրասենյակում հրավիրած եւ մոտ մեկ ժամ ուշացումով սկսված մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց Օե կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը: Մոտ մեկժամյա ուշացումն ասուլիսին կուսակցության նախագահը մեկնաբանեց, թե իրենց մեքենաները «Մերոցոր» հյուրանոցի մոտ կանգնեցրել էին, թույլ չտալով առաջ շարժվել՝ ոստծառաբանելով, թե հրադարակում հանրահավաք է:

Նախագահական ընտրությունների վերաբերյալ ՕԵԿ գրասենյակն արդեն 3 հայտարարություն է տարածել: Արթուր Բաղդասարյանը երեկ կոչեց իրենց հանդգնությունը, թե ընտրություններին եղել են ընտրակեղծիքներ, լցոնումներ, ահաբեկումներ, ասենք՝ ՕԵԿ ղեկավարը դատարարեց թե՛ ընտրությունների անցկացման այդ կերպը, թե՛ հեռընտրական զարգացումները եւ թե՛ իշխանությունների ոտահվածը: «Դատարարում ենք խաղաղական գործիչների ձերբակալությունները, ինքնադատում ենք նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի արարքները, ով 65 տոկոսով իրեն նախագահ է հռչակում Ազատության հրապարակում: Դատարարում ենք նաեւ իշխանությունների կեցվածքը, որ ուղղակի անհեթեթ հոդվածներով մարդկանց ձերբակալում են: Մինչ այս պահը եղած բոլոր ձերբակալությունների տակ մենք բացառապես խաղաղական ենթատեքստ ենք տեսնում», հայտարարեց Արթուր Բաղդասարյանը: Կուսակցության ղեկավարի խոսքով, իրենք այժմ ուսումնասիրում են ընտրակեղծիքների վերաբերյալ իրենց տեղեկությունները եւ առաջիկա օրերին կորոշեն՝ դիմել, թե՛ չդիմել Սահմանադրական դատարան. «Մեր բոլոր գործողությունները փաստարկված եւ փաստաթղթավորված են լինելու»:

Արթուր Բաղդասարյանի խոսքով, իրենց համար անընդունելի է Տեր-Պետրոսյանի թիմի գործելակերպը, բայց նաեւ գտնում են, որ ժողովուրդը պայքարում է, ուստի հարկավոր է խաղաղական ուժերի երկխոսության կայացումը: Ա. Բաղդասարյանը դժվարացավ խաղաղական լարված իրավիճակի հանգուցալուծման կոնկրետ մեթոդ նշել, բայց որ երկխոսություն հարկավոր է, անհնարելի է: «Ես այն մարդկանցից չեմ, որ ասում են՝ Սերժ Սարգսյանը ձայն չի հավաքել, ոչ, Սերժ Սարգսյանը բավականին պատկառելի ձայն է հավաքել, դա փաստ է, բայց հարց է՝ այդ ձայները բավարարում են այն հռչակված տոկոսներին, որ կան այստեղ: Ես ունենալով նվազագույնը 300 հազար ձայն՝ չեմ ժխտում, որ մեծ ձայներ է հավաքել Սերժ Սարգսյանը, եւ բարոյական էլ չեմ համարում ժխտել, մեծ ձայներ է հավաքել նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Մենք այս 3-ով հավաքել ենք ընտրողների ձայների 90 տոկոսը: Սա է ճշմարտությունը, բայց հիմա պետք է կարողանանք գալ իրավիճակի հանգուցալուծմանը», նշեց նա:

Ինքնահռչակումներին դեմ լինելով հանդերձ՝ Արթուր Բաղդասարյանի թիմը բանակցում է Տեր-Պետրոսյանի հետ եւ վստահ է, որ ինքը կարեւոր, սթափեցնող դեր կարող է կատարել այս ժամանակաշրջանում՝ չգնալով արկածախնդրության հետեւից:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ձեւ N1

ՀԱՇՎԵՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒ
ըստ 01.01.2008 թ.

Կազմակերպության անվանումը: Փաստաթղթի գործողություն
Ինքնակամ երկու տեսակները: Պետական գրանցման համարը: Հարկ վճարողի հաշվառման համարը: Տարածքային ծածկագիր: Գործունեության վայրը

Ղեկավարը: «Լեյդի Գեյզզ» ՍՊԸ դրամական ծառայությունների կազմակերպում
264.110.04621
00055059
հայ, դրամ
Երեւան, Գրիգորի 15/8
հեռախոս 740535
Արմավիրի մարզ, գ. Փարահեր, Ռաֆուլ

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ	010	22825	12706
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	080	22825	12706
II. Ոչընթացիկ ակտիվներ			
Այլ ոչնյութական պարտեր	180	120	120
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	5673	10588
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	5793	10708
ՀԱՇՎԵՊԱՀԱԿԱՆ	230	28618	23414

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի գրանցված	240	10050	10050
Կուտակված շահույթ	270	18250	13116
Ընդամենը սեփական կապիտալ	300	28300	23166
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտեր եւ գրաված	410	318	248
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	318	248
ՀԱՇՎԵՊԱՀԱԿԱՆ	500	28618	23414

Ձեւ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2007թ. տարեկան

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (փոփոխված ժամանակաշրջան՝ ամսաթիվ)	Հաշվետու տարի (փոփոխված ժամանակաշրջան՝ ամսաթիվ)
1	2	3	4
Առուվաճառքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	105704	105618
Հանձնարարական ծախսեր (վնաս)	030	105704	105618
Իրացման ծախսեր	040	(128)	(150)
Վաճառքի ծախսեր	050	(81772)	(99737)
Առուվաճառքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	23804	5731
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում	070	1360	1201
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	080	(4562)	(3060)
Գործառնական շահույթ (վնաս)	090	20602	3872
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում	130	(2259)	(2419)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	18343	1453
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի (նպաստի) հաշվարկումը	160	18343	1453
Շահութահարկի գծով ծախս (նպաստ)	170	16472	240
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի (նպաստի) հետո	180	1871	1213

«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻՑ ՀԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԻՆ ԱՆՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
Սեմինար-խորհրդակցություններ ղեկավարների եւ հաշվապահների համար
օրենսդրական պահանջներ, պարզաբանումներ եւ խորհրդատվություն, հարցերի պատասխաններ
«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն՝ Բաղրամյան 24դ, հեռ. 54-24-81, 54-74-81

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ՝ ՀՀ ԿԲ կանխիկ դրամով գործառնությունների վարչության Դրամարկղային գործառնությունների բաժնի Գորիսի տարածքային դրամարկղային կենտրոնի «գործառնավար» թափուր աշխատատեղի համալրման համար:

Աշխատանքի նպատակն է. ՀՀ մարզերում տեղակայված բանկերի դրամարկղային սպասարկում, համապատասխան ծրագրային համակարգով բանկերից ստացված կանխիկ դրամի մուտքերի եւ ելքերի ձեւակերպումների ապահովում:

Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.
Որպես ՏԴԿ-ի դրամապահոցի նյութապատասխանատու, գումարը տրամադրում է գանձապահին վերահաշվարկի եւ տեսակավորման համար եւ օրվա վերջում հետ է ընդունում գումարը:
Իրականացնում է բանկերի դրամարկղային սպասարկում՝ կանխիկ դրամի մուտքերի եւ ելքերի իրականացման ապահովում (համապատասխան ծրագրային համակարգով բանկերից ստացված կանխիկ դրամի մուտքերի եւ ելքերի ձեւակերպումների ապահովում):
Ամփոփում է դրամարկղը օրվա վերջում, կազմում է ամփոփ հաշվետվություններ եւ առաքում ՏԴԿ-ի կոորդինատորին:
Իրականացնում է ՏԴԿ-ի դրամարկղում առկա կանխիկ գումարի վերահաշվարկ:

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.
Բարձրագույն կրթության պարագայում՝ 6 ամսվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում:
Միջնակարգ կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում:
Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ Դրամարկղային գործառնություններ (խորացված), դրամների պատրաստական եւ վնասունակության հատկանիշները (խորացված), հաշվապահական հաշվառում (միջանկյալ):
Լեզուների իմացություն՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացություն (ռուսերեն եւ անգլերեն լեզուները՝ հաղորդակցվելու նպատակով):

Անհրաժեշտ հմտություններ՝ Համակարգչով աշխատելու հմտություն (MS Office, «Գործառնական օր» ծրագրի իմացություն), թղթադրամներ հաշվող եւ սուղագր սարքերի հետ աշխատելու հմտություն, դրամն արագ եւ անսխալ հաշվելու ունակություն:

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 2008թ. մարտի 11-ը
Աշխատավարձը՝ 89 700 դրամ
Պահանջվող փաստաթղթերը.
- դիմումի ձեւը (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www.cba.am /«Մեր մասին»/«Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում)

Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով:
Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www.cba.am) կամ տրվում է Կենտրոնական բանկում:
Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 եւ 26-23 (ներքին):

ԿԲ մամուլի ծառայություն

Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը փետրվարի 26-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը, հաստատեց «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը եւ հրապարակումը» կանոնակարգ 3-ը:
Փոփոխություններ կատարվեցին «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը եւ վերահսկողությունը» կանոնակարգ 11-ում եւ «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը եւ հրապարակումը» կանոնակարգ 15-ում:
Խորհրդի որոշմամբ «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ին «Լիդեր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրվեց:

ԿԲ մամուլի ծառայություն

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 26.02.2008 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	306.89
EUR	1	ԵՎՐՈ	454.72
RUR	1	Ռուս. ռուբլի	12.54
GEL	1	Վրաց. լարի	198.12

Կորել է
«Աջակցություն» ՍՊԸ-ի պետական գրանցման վկայականը N 012327, գրանցման համար՝ 286.110.01280, անաթիվ 01.06.1995 թ.: Դատարել անվավեր:

www.azg.am

Լուսանկարները՝ Արարատ Գրիգորյանի եւ Ռաֆայել Ղազարյանի: Տպագրությունը՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Նակոբ Անանիեան: Տպաքանակ՝ 3000, սառոգրված է տպագրության՝ 26.02.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արտակունյաց 2: